



**Հոգեւոր Աստուծոյ Ամենուն համար**  
**"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE**

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(Ը. Տարի) ՄԱՅԻՍ 1932

(8<sup>me</sup> Année) Mai 1932

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Խմբագրական

Ս. ՀՈԳԻՒՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ .. .. .

Հոգ. Կեանք

ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ Է .. .. .

Ս. ՀՈԳԻՒՆ ԽՈՍՏՈՒՄԸ .. .. .

ԱՅՍՕՐՈՒՄՆ ԵԿԵՂԵՑԻՆ .. .. .

Ս. Կրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ .. .. .

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ .. .. .

Ս. ԳԻՐԲԸ ԵՒ ՔԱՂԱՔ. ԹԵՐԹԵՐԸ .. .. .

Մանկանց սիւնակ

ՆՈՐ ԿՕՇԻԿՆԵՐ .. .. .

ՄԱՆՐԱՆ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ .. .. .

Ազատ Թարգմ. Ն. Մ.

Թրգ. Վեր. Ն. ՓԱՓԱԶԵԱՆ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Թրգ. Վ. ԾԱՀԱԿԵԱՆ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսագրերը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ զկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, ուստի Յշմարտութեան ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսագրերը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Իւրաքանչիւրն ունի իր խմբագրական մարմինը: Երկուքն ալ կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս): Անոր պատասխանատու խմբագիրն է՝

**ՅՈՎՀԱՆՆԷՍ Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Մարսէլ**


Թուրքերէնը ունի 8 էջ ո՛չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

**ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ**

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:



ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը ստարեկան է եւ կանխիկ:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք  
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք  
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ  
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք  
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են  
Թերթիս խմբագրութեան, հետեւեալ կերպով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արմենի'ր դուն  
որ կը քնանաս, եւ  
կանգնէ մեռելնէ  
րէն, ու Քրիստոս  
քեզի լոյս պիտի  
տայ:  
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս  
կէ քիչ մը ատենէն  
Ան որ գալու է՝  
պիտի գայ ու պի-  
տի չուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ Թէ  
Անոր Խանգիտը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,  
ծեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Երբ. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1932

ԹԻԻ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## Ս. ՀՈԳԻԻՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Պուր. Ս. Հոգիով պիտի մկրտուիք Գործ. Ա. 5

Պատուով ձեզի է ու ձեր որդւոցը եւ ամէն  
հեռու եղողներուն Գործ. Բ. 39:

Սուրբ Հոգիով մկրտութիւնը որոշ փորձա-  
ռական իրականութիւն մըն է, որ ամէն հաւա-  
տացեալի կեանքին մէջ տեսնուելու է, թէ իր  
կողմէ եւ թէ ուրիշներու:

Առաքեալները Պենտէկոստէի օրը Սուրբ  
Հոգին ընդունեցին եւ այդ զօրութիւնով կարող  
եղան որոշ գործ մը ընել, զոր չէին կրցած ը-  
նել մինչև այդ օրը: Այս գործունէութիւնը յայտ-  
նի կերպով կը տեսնուէր իրենց վրայ: Անոնք  
Սուրբ Հոգւոյն գերազոյն ուժովը կը կառա-  
վարուէին, կը խօսէին զարմանալի բաներ եւ  
զարմանալի լեզուներով, այնպէս որ Հրեաներէն  
շատեր ծաղր կ'ընէին զանոնք, ըսելով թէ նոր  
գինիով գինովցեր են: Սակայն Պետրոս տասնը-  
մէկին հետ ելաւ եւ փարատեց իրենց սխալ  
խորհուրդները բացատրելով թէ իրենք Սուրբ  
Հոգիով լեցուեր էին հին ատենուան մարգարէնե-  
րէն սկսեալ եւ անկէ վերջը խոստացուած վկա-  
յութեանց համեմատ:

Նոյն օրը դարձի եկող երեք հազարն է վեր-  
ջը եկեղեցիին աւելցող երկու հազարն ալ ու ա-  
նոնցմէ յետոյ հաւատքին հնազանդող բոլոր  
խումբերն ու անհատներն ալ Սուրբ Հոգիով լեց-  
ուեցան. (Գործ. Ը. 12, 13, 16, Ժ 44-46, ԺԺ. 2-6):

Բայց Սուրբ Հոգիին մկրտութիւնը առա-  
ջին դարուն յատուկ պարզեւ մը չէ միայն, հապա  
բոլոր դարերուն մէջ ապրող բոլոր հաւատաց-  
եալներուն եղած խոստում մըն է ինչպէս մեր  
բնաբանը ցոյց կուտայ: Ուստի այս օրուան իւ-  
րաքանչիւր հաւատացեալ իրաւունք ունի այդ

ազանձնաշնորհէն. պէտք է ընդունի զԱյն, պէտք  
է պնդէ՝ այդ իրաւունքին վրայ, պէտք է Սուրբ  
Հոգիով լեցուի, առանց որոյ չկրնար ինքն ապ-  
րիւ, շարժիլ ու պտղաբերիլ:

Իրաւ է թէ ամէն հաւատացեալ Հոգիէն կը  
ծնանի եւ ունի Հոգին Սուրբ, առանց որոյ նա  
արդէն Քրիստոսին չէ (Հռով. Ը. 9) այսու ամե-  
նայնիւ Ս. Հոգիին լեցունութիւնը հաւատացեա-  
լին մէջ զօրութիւն մը կ'ստեղծէ զայն գործի  
յարմարցնելով, այնպէս որ չափազանցութիւն  
մը կամ անիրաւութիւն մը ըրած չենք ըլլար երբ  
ըսենք թէ կան շատ մը հաւատացեալներ որոնք  
Ս. Հոգիին մկրտութիւնը չունին: Մեծ ցաւ մը,  
մեծ կորուստ մըն է այս կէտը ներկայ եկե-  
ղեցիին համար, որ ունի շատ անդամներ բայց  
տկար ու անզօր, առանց վկայութեան եւ համո-  
Մինչդեռ իսկական եկեղեցիին վիճակը այն է,  
զոր մեզի կը նկարագրէ Պողոս Ա. Կոր. ԺԲ. ԳԼ-  
խուն մէջ: Ուշադրութեան առնենք այդ զրուիւր  
3 համարէն սկսելով: Եկեղեցիին մէջ «Պարզեա-  
լները զանազան են, բայց նոյն Հոգին է, նաեւ  
պաշտօնները զանազան են... մէկուն Հոգւոյն  
յայտնութիւնը տրուած է, ուրիշին Հոգիով իմաս-  
տութեան խօսք, ուրիշին գիտութեան խօսք,  
հաւատք, բժշկութեան պարզեւ, հրաշագործու-  
թիւն, մարգարէութիւն, հոգիներու ընտրութիւն,  
զանազան լեզուներ եւ լեզուներու թարգմանու-  
թիւն միեւնոյն Հոգիէն... վասնզի ամէնն ալ, թէ  
Հրեայ եւ թէ Հեթանոսներ Հոգիով մէկ մարմին  
ըլլալու մկրտուեցան: Ի՛նչ երջանիկ եւ բնական  
վիճակ, որմէ ափսո՛ս, չափազանց հեռացած են  
ներկայ եկեղեցիներ:

Մենք առաքեալներու ճամբայէն երթալու  
տեղ, աւելի կը սիրենք քանի մը տարի առաջ

ապրող մեր բարի հայրերուն ճամբայէն քայելու կ'ուզենք անոնց պարզ հաւատքը ընդօրինակել առանց անդրադառնալու նաեւ անոնց տկարութեանց եւ երբ մեզմէ ոմանք աւելի պահանջ ընեն Աստուծոյ խոստումներուն համաձայն, կը գտնենք թէ Հափազանց համարձակ ու պահանջկոտ են անոնք, յանդուգն ու արկածախնդիր, այո, յիմարներ: Բայց եթէ Աստուծոյ խոստումները ուշադրութեամբ քննենք իր խօսքին մէջ, պիտի տեսնենք թէ Անոր թագաւորութիւնը զօրաւորներն է որ պիտի ժառանգեն, մինչդեռ թըմբութեան լուծը չկոտորող անհատներ եւ համայնքներ անգործութեան մէջ կը նիրհեն, չունենալով վկայութիւն եւ ծառայութեան գործութեան յայտնութիւն: Ուստի յայտնապէս կարեւոր է Սուրբ Հոգիին մկրտութիւնը Աստուծոյ բոլոր գործաւորներուն համար: Ինքն է որ խօսքը կը դնէ իր ծառաներուն բերանը (Երեմ. Ա. 9), ինքն է որ այդ խօսքին վկայութիւն կուտայ լսողներուն սրտին մէջ, յանդիմանելով ու համոզելով դանոնք Քրիստոսի արդարութեան (Յովհ. ԺԶ. 8): Եթէ Աստուծոյ գործաւորներէն մին երկար եւ խղճամիտ գործունէութենէ մը յետոյ դեռ որեւէ արդիւնք չտեսներ իր համայնքին մէջ եւ եթէ դուրսէն սպրդած որեւէ արգելք մըն ալ գոյութիւն չունի զինքն անպտուղ ընող, պէտք է կրկին անձնաքննութեամբ հասկնայ թէ արդեօք այդ անյաշողութեան պատճառը Ս. Հոգիին մըկրտութեան պակասը չէ: Թէեւ հարկաւոր է Սբ. Հոգիին մկրտութիւնը ամէն մէկ գործաւորի համար, բայց այդ պէտքը նախապէս զգալու է այն: Տէրը ըսաւ, «Առանց Ինծի բան մը չէք կրնար ընել»: Ուստի գործաւոր մը որքան ալ մտաւորապէս պատրաստուած ըլլայ, պէտք է գիտնայ թէ իր գիտութեան շեղքը Աստուծոյ գործի դաշտին մէջ չկրնար գործել, Ս. Հոգիին սուրբ պէտք է: Ու երբ նա այդ գիտակցութեան հասնի, թող խնդրէ Աստուծմէ, որ պիտի տայ իրեն: Տէրը կուտայ անոնց միայն որոնք կը խնդրեն ու նաեւ կը հնազանդին (Դործ. Ե. 32): Ասկէ առաջ թերթիս էջերուն մէջ հրատարակած ենք թէ Սուրբ Հոգիով լեցուելու համար Աստուծոյ առջեւ բացուիլ, Անոր բոլորանուէր յանձնուիլ, Անոր բացարձակ իշխանութեան տակ անցնիլ, Անով շրջապատուիլ պէտք է: Անոր հասնելու ապահով միջոցը դարձեալ հաւատքն է: Մենք վերստին ծնած ենք Յիսուս Քրիստոսի քաւարար արեամբ եղած փրկութեան հաւատալով: Այս նոյն հաւատքը զմեզ առաջնորդելու է այն իրականութեան թէ Անիկա է մեր կատարեալ բաւականութիւնը,

Ամէնը ամէն բանի մէջ (Անոր լեցունութենէն շնորհք առինք շնորհքի տեղ): Նոյն հաւատքով եւ համարձակութիւնով մօտենալու ենք նաեւ Հոգիով մկրտուելու համար (Ա. Յովհ. Ե. 14, 15) եւ ընդունելու ենք զԱյն հաւատքով: Ո՛չ թէ զգացումով, այլ հաւատքով, գիտնալով թէ Այն որ ամէն բաները մեզի պարգեւեց, պիտի պարգեւէ նաեւ Ս. Հոգւոյն կնիքը:

Սիրելիս, հոն է, ճիշդ այն գործնական քայլին մէջ ուր հաւատացեալներէն շատերը կ'անճրկին ու երկար ամիսներով ու տարիներով անմասն կը մնան յորդառատ օրհնութենէն: Տէրը զանոնք է որ թերահաւատ կը կոչէ: Արդ, մօտեցիր հաւատքով եւ ընդունէ այն սքանչելի գործութիւնը որ Սօղոս մը Պօղոսի դարձուց: Զարկ Ծինի մը հարիւր հազարներու փրկութեան միջոց ըրաւ եւ քեզ ալ իր կամացը համաձայն պտղատու ծառ մը պիտի ընէ:

Յովհաննէս Մկրտիչ վկայեց ժողովուրդին թէ քիչ օրեր յետոյ անոնք Ս. Հոգիով ու կըրակով պիտի մկրտուէին (Մատ. Գ. 11): Կրակը, այրող, մաքրող, զտող, սրբող յատկութիւն ունի: Այս գործողութիւնը բոլորովին տարբեր գործողութիւն մը ըլլալ չնշանակեր: Ընդհակառակը, Սուրբ Հոգիին միեւնոյն գործողութեան երկու տեսակ արտայայտութիւնները: Առաջինն է վկայութեան աքտը, երկրորդը սրբացման աքտը: Աստուծոյ զաւակները երբ կ'սկսին Սբ. Հոգիին գործութիւնով վկայել աշխարհի, խնդրելու են որ Անիկա նոյն կրակովը նաեւ իրենց ներքին մարդը առաւել քան զառաւել Քրիստոսի փառաւոր կերպարանքին փոխէ, եւ Սբ. Հոգիին գործն է այս: Անիկա կ'ընէ, երբ մենք ալ պատրաստ ենք իր պայմանները լեցնելու: Առաջին եւ ամենակարեւոր պայմանը Ս. Հոգին ընդունելու, առանց ոեւէ կասկածի մեր վերստին ծննդեան կատարեալ վստահութիւնը ունենալն է, ապա գիտնալ թէ այս մեր ըրած գործը Տէրոջմէ՞ ընդունած ենք: Անոր ամէն բանի մէջ կասարեալ հնազանդած ենք: Ս. Հոգիին մկրտութեան պէտքն զգացած ենք, կը հաւատա՞նք թէ հաւատքով պիտի ընդունինք զԱյն:

Եթէ այս եւ նման կարեւոր պայմաններէն զատ արտաքին ոեւէ արգելք չունիս, սիրելի ընթերցող խնդրէ Աստուծմէ իր Սուրբ Հոգիին մըկրտութիւնը որ ամենուն առատապէս կուտայ ու չնախատեր եւ քեզի պիտի տրուի: Միայն թէ հաւատքով խնդրէ ու մի երկմտիր: (Յակոբ Ա. 5, 6):

ՀՈԳ. ԿԵԱՆՔ  
.....

## ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ է

Զօրութեամբ լեցուած քրիստոնեան կ'ստանայ մնայուն զօրութիւն մը որ աւելի զգալի կ'ըլլայ անոր կեանքին մէջ քան անոր շրթունքներուն վրայ: Ճարտասանութիւն, համոզելու կարողութիւն, տրամաբանութիւն, գիտութիւն, արտայայտութեան յօտակութիւն և «Լեզուներ խօսիլ» անօգուտ են առանց վերէն զօրութեան, մինչդեռ վերէն զօրութիւն ստացած մէկը կրնայ դիւրաւ ըլլալ առանց այս ամենուն եթէ հարկը այդպէս պահանջէ: Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Իմ խօսքս եւ քարոզութիւնս ոչ թէ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր, հապա չոգոյն եւ զօրութեան ապացուցութիւնովը» (Ա. Կոր. Բ. 4):

Ամենազարմանալի կէտը այս է որ «Լեզուներու պարգեւը ներկայիս ամենէն կարեւոր նշանակատեալ պարգանքերու տակ իսկ չի տրուիր: Հարիւրաւոր միսիոնարներ տարիներ կ'աշխատին օտար լեզուներ սորվելու եւ շատ անգամ նուիրուած այրեր եւ կիներ կ'ստիպուին միսիոնարական դաշտէն վերադառնալ, քանզի անկարող կ'ըլլան սորվելու այն ազգերուն լեզուները, որոնց մէջ գործել կը բաղձան: «Լեզուներու պարգեւը» անբացատրելի արժէք պիտի ունենար այսպէս լրջօրէն նուիրուած Աստուծոյ ծառաներու, սակայն թէպէտ Սուրբ Հոգին անտարակոյս կ'օգնէ անոնց սորվելու, երբեք լսած չենք թէ միսիոնար մը յանկարծ՝ գերբնականօրէն տիրացած ըլլալ օտար լեզուի մը գիտութեան: Նոյնիսկ անոնք որ կ'ըսեն թէ լեզուներու պարգեւը ստացած են, անկարող են խօսելու օտար լեզու մը: Իրապէս պատահած է որ ոմանք յափշտակութեան վայրկեաններու մէջ հեթանոս ցեղի մը լեզուն խօսելով գացած են անոնց մէջ գործելու, սակայն ցաւով գտած են թէ իրենց տրուած զօրութիւնը մնայուն եղած չէ: Գոնէ այս զարմանալի իրողութիւնը մեզի մեծ զգուշութիւն գործածել տալու է լեզուներու պարգևին նկատմամբ:

Քիչեր միայն Դաւիթ Պրէյնարտէ աւելի երբեք լեցուած են Սուրբ Հոգիին զօրութեամբ կամ աւելի զարմանալի կերպով գործածուած են Աստուծոյ: Անիկա ժամերով կ'աղօթէր «Կարմիր Հնդկներուն» փրկութեան համար և անոնց լեզուին տակաւին անտեղեակ ըլլալով անգլիերէն լեզուով կը խօսէր անոնց հետ, սակայն այն վայրերէնքը անգլիարէն լեզուին անծանօթ ըլլալով հանդերձ՝ Սուրբ Հոգոյն զօրութենէն մղուած՝

կ'իյնային դետին ու ինքզինքնին Աստուծոյ կը յանձնէին: Երբ մէկը Սուրբ Հոգիով լեցուած է, առանց լեզուներու պարգեւը ունենալու ալ կրնայ գործածուիլ: Այո, Աստուած կարող է աւելի մեծ գործեր տեսնել Սուրբ Հոգիով լեցուած անհատի մը մէկ ակնարկին միջոցաւ, քան թէ անսուրբ քրիստոնեայի մը շրթունքներով, հոգ չէ թէ ինչ լեզու ալ գործածելու ըլլայ անիկա: Ամենաբարձր հանճարը կարող չէ հասնիլ Հոգիին ներշնչման ամենացած չափին:

Ուրեմն ի՞նչ է վերէն զօրութեան նշանը: Զօրութիւնը ի՞նչ է: Մեր Տէրը շատ որոշ կերպով ըսաւ թէ Սուրբ Հոգին ի՞նչ կ'ընէ մեր մէջ եւ մեզի համար, ուրեմն զօրութիւն է Անոր մեր մէջ եւ մեզի համար ըրածը:

Յիսուս ըսաւ,

Ա. Անիկա աշխարհը պիտի յանդիմանէ մեզի համար եւ արդարութեան համար ու զատատանի համար (Յովհ. Ժ. 8):

Բ. Ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի: Դաւիթները ձեզի պիտի իմացնէ (Հմր. 13): Անիկա Զիս պիտի փառաւորէ (Հմր. 14): Իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ (Հմր. 14): Անիկա ձեզի բոլորը պիտի սորվեցնէ, եւ ինչ որ ձեզի ըսի միտքերնիդ պիտի բերէ (Յովհ. Ժ. 26):

Ուրեմն Սուրբ Հոգիին գործն է նոր կերպով մը Քրիստոսը մեզի յայտնել: Մեզի աւելի կատարեալ կերպով հասկցնել Քրիստոս Յիսուսի միտքը ու սէրը եւ զԱյն փառաւորել մեր մէջ եւ մեր միջոցով: Սուրբ Հոգին հեռադիտակի մը նման Քրիստոսը եւ Քրիստոսի վերաբերած բաները մեզի կը մօտեցնէ: Անիկա կը նմանի մանրադիտակի մը որ Քրիստոսի վերաբերած անտեսանելի բաները մեզի տեսանելի կ'ընէ ու զանոնք գերազանցօրէն սքանչելի ու գեղեցիկ կը ներկայացնէ մեր աչքերուն: Սակայն ոչ հեռադիտակը ոչ ալ մանրադիտակը մեզի համար արժէք մը կ'ունենան մինչեւ որ լոյսի ճառագայթները չկեդրոնանան անոնց մէջ: Ամէն հաւատացեալի մէջ Քրիստոսի Հոգին կը բնակի, սակայն երբոր Սուրբ Հոգին կատարելապէս կը տիրանայ մեզի՝ եւ ինք միայն կ'ըլլայ մեր կառավարը, Քրիստոսի վերաբերած բոլոր բաները մեր աչքին առջեւ կը պատկերացնէ եւ այնպէս լոյս մը կը տարածէ Քրիստոսի եւ Անոր ճշմարտութեան վրայ որոն նմանը մեր աչքերը երբեք տեսած չէին: Զարմանալի կերպով կը լուսաւորուի նաեւ մեր հասկացողութիւնը:

Ճօրճ Միւլըր ինքզինքը կատարելապէս Տէր Յիսուսի յանձնէլէն եւ Սուրբ Հոգոյն մկրտու-

թիւնը իրեն իւրացնելէն յետոյ, «Սենեակս առանձնացայ աղօթելու եւ Աստուծոյ խօսքին վերայ մտածելու եւ ահա այդ քանի մը ժամերուն մէջ աւելի բան սորվեցայ քան որ նախորդ շաա մը ամիսներու ընթացքին սորված էի», կ'ըսէ:

Ինչպէս որ ճիւղը որթին մէջն է, նմանապէս ալ ամէն քրիստոնեայ Քրիստոսի մէջ է, բայց շատերու մէջ արգելքներ կան որոնք որթին հիւթին հոսումը մեր մէջ կը կասեցնեն, արգելքներ՝ աստուածային կեանքին մեր մէջ հոսելուն եւ մեզմէ ալ ուրիշներուն օրհնութեանը համար՝ արտահոսելուն:

Արգելքները հեռացուցէք ձեր մէջէն եւ Սբ. Հոգին անմիջապէս բոլորովին նոր կերպով մը պիտի ճանչցնէ ձեզի Տէր Յիսուսը, «Որը ճանչնալը յաւիտեանական կեանք է»: Մինչեւ որ Սբ. Հոգին չբանայ մեր աչքերը՝ անկարելի է մեզի տեսնել Տէր Յիսուսը: Մինչեւ որ Սուրբ Հոգին չլուսաւորէ մեր հասկացողութիւնը՝ անկարելի է մեզի տեսնել զԱյն՝ Իր բոլոր գեղեցկութեամբը եւ փառքովը եւ զգալ Անոր զօրութիւնը: Ահա այսպէս կը փառաւորէ Սուրբ Հոգին Քրիստոսը:

Արդ՝ վերէն զօրութիւնը՝ աւելի առատօքէն Քրիստոսի կեանքը ստանալու եւ զայն ուրիշներու յայտնելու զօրութիւնն է: Սակայն այս կարգի գիտութիւն մը եւ յայտնութիւն մը Սուրբ Հոգին միայն անոնց կրնայ հաղորդել որ կը հընազանդին Իրեն: Անոնց միայն՝ որ Քրիստոսի կամքը կը կատարեն եւ զիտեն Անոր վարդապետութիւնը: Սրտով մաքուր եղողները միայն կրնան զԱստուած տեսնել եւ զԱյն ճանչնալ: Ինչ համեմատութեամբ որ ինքզինքնիս Քրիստոսի յանձնենք, նոյն համեմատութեամբ կ'ստանանք Սուրբ Հոգիին զօրութիւնը: Զօրութիւն ստանալու միակ ճամբան է՝ կատարեալ նուիրմամբ Աստուծոյ յանձնել մեր նպատակները, մեր գործերը, մեր ծրագիրները եւ մեր կեանքերը: Վերէն զօրութիւնն է այն զօրութիւնը որ ուժգնօրէն կը յայտնէ մեզի Քրիստոսը եւ զԱյն բոլորովին իրական կ'ընէ մեր սիրտերուն մէջ, որով իրողութիւններ կը դառնան նաեւ մեր կրօնքը եւ վրկայութիւնը:

Ինչ ըսել կ'ուզենք: Ըսել կ'ուզենք թէ մարդիկ Քրիստոսի կեանքը կը տեսնեն մեր մէջ: Անոնք կը տեսնեն թէ Քրիստոս մեր սիրտերուն մէջ կը բնակի հաւատքով եւ թէ մենք «Կը լըցուինք Աստուծոյ լրութեամբը»: Անոնք կը տեսնեն թէ մենք չենք փնտեր մեր անձնական շահը, մեր հաճոյքները, մեր հանգստութիւնը կամ անունը: Մէկ պատգամ միայն կը հռչակուի

մեր կեանքերով՝ «Քրիստոսի հետ խաչը ելայ, եւ ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջ» (Դաղ. Բ. 20):

Զօրութեամբ լեցուած քրիստոնեան քրիստոնեայ մըն է որ այնպէս բարձր կը բռնէ Քրիստոսի պատկերը եւ Քրիստոսը՝ որ իր մատերուն ծայրերն անգամ չեն երեւնար, այլ Քրիստոս ու միմիայն Քրիստոս: Քրիստոնեայ մըն է որ միայն եւ միմիայն կը փնտռէ իր Տէրը՝ Յիսուս Քրիստոսի փառքը եւ ամենայն խոնարհութեամբ եւ խոր ուրախութեամբ եւ երախտագիտութեամբ կրնայ ըսել, «Աստուած ուզեց Իր Որդին ինձի յայտնել» (Դաղ. Ա. 24):

Պօղոս Իրեն միջոցաւ դարձի եկողներուն համար կ'աղօթէ ըսելով, «Որպէսզի մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը փառաւորուի ձեր մէջ, եւ դուք ալ Անոր մէջ» (Բ. Թեա. Ա. 12): Այսինքն՝ որպէսզի Յիսուսի կեանքն ալ մեր մէջ յայտնուի ... մեր մահկանացու մարմիններուն մէջ»:

Օրհնեալ ըլլայ Տէր Յիսուս որ այսպիսի զօրութիւն մը տուած է մարդոց: Երբ յիշենք թէ Քրիստոս Յիսուս ինչ կը նշանակէ մեզի համար եւ ինչէ՛ր կրնայ նշանակել, երբ յիշենք թէ Անիկա ինչ կրնայ ըլլալ մեր կեանքերուն եւ ծառայութեան միջոցով՝ մեղքով ծանրաբեռնուած ու խոտորած աշխարհի մը, կը զարմանանք թէ ինչպէ՛ս կրնայ որեւէ հաւատացեալ ետ կենալ ինքզինքը բոլորովին Աստուծոյ յանձնելէ կամ յապաղիլ ինքզինքը ամբողջովին Անոր տրամադրելու:

Մենք անձանօթ չենք Քրիստոս Յիսուսով եղած փառաց ճոխութեան: Չենք տարակուսիլ թէ Անիկա յօժար է Իր բոլոր շնորհքը առատապէս մեր վրայ թափել: Ոչ ալ կը տարակուսինք Անոր կարողութեան, սակայն նոյն իսկ ամենէն լուրջ ու անձնուէր Աստուծոյ զաւակներ, կատարելապէս Անոր յանձնուելու կը տնտնան, հակառակ անոր որ այդ է զօրութեան առաջնորդող միակ քայլը:

Կատարելապէս Անոր յանձնուիլ կը նշանակէ բոլորովին Անկէ առաջնորդուիլ, եւ բոլորովին առաջնորդուիլ Անոր ծակուած ձեռքերէն՝ կը նշանակէ իրապէս զօրութեամբ լեցուած քրիստոնեայ մը ըլլալ:

«Արդ կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը, սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը» (Հռով. ԺԲ, 1):

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԽՈՍՏՈՒՄԸ

Վասնզի խոստմունքը ձեզի է ու ձեր որդիներուն, եւ ամէն հեռու եղողներուն զորոնք մեր Տէր Աստուածը պիտի կանչէ: Գործ. Բ 39

Պէնտէկոստէն Աստուծոյ համբերութեան եւ սիրոյն մէկ հիանալի յայտնութիւնն է, եւ մեղաւորի մը համար ամենէն քաջալերիչ դասը: Հոն կը տեսնենք թէ անցեալի մեղքերը մարդը անյարմար չեն ըներ հոգեւոր օրհնութիւններ ըստանալու: Վերնատանը մէջ երկնային զօրութեան սպասող աշակերտները գերազանց ցնծութեամբ կը յիշէին թէ Տէրը ոչ թէ միայն իրենց յանցանքներուն եւ թերութիւններուն տեղեակ էր զոր իրենց բարեկամները իրենց առջեւ կը դնէին, այլ նոյնիսկ այն գաղտնի մեղքերուն ուրոնք միայն Աստուծոյ եւ իրենց ծանօթ էին: Տէրը զիրենք հիմնովին ճանչնալով հանդերձ իրենց խոստացած էր թէ վերէն զօրութիւն պիտի ըստանային (Շատ օրեր չանցած): Հակառակ իրենց անարժանութեան՝ Տէրը խոստացած էր Ս. Հոգին զրկել եւ անտարակոյս պիտի կատարէր իր խոստումը: Նայնիսկ Փրկչին, իրենց անցեալ կեանքին մէջ արտայայտած յանդիմանութիւնները քաջալերական կը թուէին իրենց հիմա: Այն որ Յակոբոսի եւ Յովհաննէսի ըսած էր, «Զէք զիտեր ինչ հոգիի տէր էք դուք», եւ Սիմոն Պետրոսի «Նտիս դնա, Սատանայ», ու իր մօրը, «Ով կին, դուն ինծի հետ ինչ բան ունիս», եւ թողմասի՝ «Մի՛ ըլլար անհաւատ, այլ հաւատացեալ», նաեւ զօրութիւն խոստացած էր միեւնոյն անհատներուն, հակառակ անոնց թերութիւններուն:

Այս խօսքերը կարդացողներէն ոմանք թերեւս ըսեն թէ բոլոր ըսածներս ճշմարտութիւն են, սակայն իրենք զիրենք Անոր աշակերտներուն ամենափոքրէն իսկ աւելի անարժան կ'ըզան ու չեն կրնար ինքզինքնին անոնցմէ ամենասխալականին տեղն իսկ դնել: Այս կարգի անհամարձակ եւ վարանոտ անհատներէն կը խնդրենք որ կարդան Յովհաննէս Մկրտիչի, իր մօրը որովայնէն Սուրբ Հոգիով լեցուած մարդուն խօսքը որ կ'ուզողի Փարիսեցիներուն եւ Սադուկեցիներուն, մեր Տէրոջը ամենազառն եւ մնայուն թշնամիներուն, «Անիկա ձեզ Սուրբ Հոգիով ու կրակով պիտի մկրտէ»: Եւ այս խօսքը կ'ըսէ զանոնք «Թեքու ծնունդներ» կոչելէն վերջը:

Եղբայրներ, եթէ Տէրը կարող է այն մաքուր բարոյականով, եռանդուն, անձնուէր, սակայն անձնարդար Փարիսեցիները եւ յարութիւնն ու հրեշտակներուն եւ ուրիշ հոգիներուն գոյութիւնը

ուրացող Սադուկեցիները Սուրբ Հոգիով լեցնել, մեզմէ ամէն մէկուն համար ալ յոյս կայ: Յաւատենալանութիւնը մեզի բաւական պիտի չըլլայ Հափելու մեր Աստուծոյն անսահման շնորհքն ու բարութիւնը:

Անիկա ոչ թէ միայն կարող՝ այլ նաեւ յօժար է մարդը անօրէնութեան տմենացած խորերէն սրբութեան ամենաբարձր բարձունքներուն հասցնելու:

Երկու տարի առաջ Ամերիկայի մէջ մարդ մը մեռաւ որ թերեւս Միացեալ Նահանգներուն ամենամեծ ոճրագործն էր: Ոճրագործութիւններու պատճառաւ անիկա վաճառեցաւ այն քաղաքէն ուր ծնած էր եւ արտօնութիւն չունէր հոն անգամ մ'ալ ոտք կոխելու: Երկու անգամ զինուորական բանակէն եւ անգամ մ'ալ ծովային զինուորներու բանակէն արտաքսուած էր: Այնքան անարգ մէկը կը նկատուէր որ արժանի չէր սեպուեր անոնց շարքին մէջ գտնուելու: Օր մը իր բարեկամներէն մէկը զայն նախատելով ըսաւ թէ կը վախար հոգեւոր ժողովի մը ներկայ գտնուի: Այդ կէտին մէջ ալ իր անվախութիւնը ապացուցանելու համար անիկա օր մը ժողովի մը գնաց ծաղրելու նպատակաւ: Սակայն հոն Աստուած անոր հանդիպեցաւ, համոզեց զայն թէ մեղաւոր մըն էր, եւ դայն խաչին մօտեցնելով ներեց ու ջնջեց անոր մեղքերը: Քիչ ժամանակէն մարդը Ամերիկայի ամենամեծ սուրբերէն մէկը եղաւ: Պատ. Ուիլիւմ Ճէյքըպ, վերստին ծնած ոճրագործը, երկար տարիներ Տօք. Թօրրիի օգնականն եղաւ: Տօք. Թօրրի որ ամբողջ աշխարհ պատած եւ ամէն երկրի քրիստոնեայ առաջնորդներուն հետ շփման եկած էր, կ'ըսէր թէ առանց բացառութեան՝ Ճէյքըպ ամենասուրբ եւ ամենէն շատ սիրուած անձնաւորութիւնն էր որուն երբեք հանդիպած ըլլար:

Մտածեցէք ասոր վրայ եւ թողուցէք որ այս ճշմարտութիւնը ձեզ յաղթահարէ: Թող մեզներէն չնչէ վերէն զօրութիւն ստանալու պայմանները կատարելու:

Աստուծոյ շնորհքովը փոխուած այս հիանալի մարդուն պատմութիւնը երբ օր մը կ'ընէի եկեղեցիի մը մէջ, փոխերէցը անմիջապէս ոտքի ելլելով ըսաւ թէ երեք տարի առաջ Պատ. Ճէյքըպ իրեն հիւրն եղած էր ճիշդ այդ եկեղեցիին մէջ, եւ անոր իր տունը գտնուած միջոցին իր բնակարանը երկինքի նման եղած էր:

Արդ Աստուած կրնայ նոյն բանը ընել թէ քեզի եւ թէ ինծի, վասնզի խոստմունքը... ամենուն է զորոնք մեր Տէր Աստուածը կը կանչէ:

## ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

(Շար. 2 Թիւն)

Կտրուած մազ: Մազերը կտրուած կին մը կրնայ երկինք երթալ: Այո, մազերը կտրուած կին մը կրնայ երկինք երթալ: Մեր յոյսը՝ կարճ կամ երկայն մազի վրայ յենած չէ, ոչ ալ մեր կատարած բարի գործքերուն վրայ, Մենք Յիսուս Բրիստոսի արեան քառութիւնով հաւատքով փրկուած ենք: Բայց մազ կտրելու խնդիրը մեծ խնդիր մըն է, վասնզի այս հարցը մի քանի տարիներէ ի վեր միլիոնաւոր միտքերը չարչրկած է: Պատճառ եղած է աւելի վիճարանութեան, աւելի ընտանեկան կռիւի, աւելի սրտցաւի, արցունքի, էրիկը կնիկէն զատած է, Ամուսնալուծման դատարաններուն գործ բացած է: Եթէ այս բաները իրողութիւն են, ուստի կ'արժէ մեր լուրջ նկատողութեան առնել:

Կիներ ինչո՞ւ կը կտրեն իրենց մազերը: Ինչո՞ւ կտրեցիք ձեր մազերը: Ոմանք կ'ըսեն թէ նեղութիւնը կը քիչցնէ: Ուրիշներ կ'ըսեն, աւելի աղէկ կ'երեւնայ: Ոմանք ալ կ'ըսեն, աւելի առողջապահական է: Շիտակը խօսելով ասոնք չեն բուն պատճառները: Կտրեցիր, որովհետեւ նորաձեւութեան աստուածը քեզի ըսաւ թէ կտրէ:

Աղէկ, կ'ըսես, ի՞նչ է աւարկութիւնդ կտրուած մազին, որովհետեւ հակառակ է Սբ. Գրոց եւ անտարակոյս: Սբ. Գիրքը կը դատապարտէ զայն Ա. Կոր. ԺԱ. 14, 15ի մէջ: «Էրիկ մարդ մը թէ որ երկար մազերով է, իրեն անարգանք է, բայց կնիկը թէ որ երկար մազերով է, իրեն փառք է: Շատ բաներ կան, գործնք եթէ մարդը ընէ, ամօթ է իրեն, սակայն եթէ կինը ընէ, նոյն բանը փառք է իրեն: Եթէ ըսեմ ամօթ է մարդու համար կերակուր եփել, տան գործ ընել, երբ իր կինը դուրս պտըտի, անմիջապէս կը հասկնաս թէ իրաւունք չեմ տար այս բանին: Միւս կողմէն, եթէ ինծի ըսես այսինչ կնկան համար որ տուն կը կենայ եւ իր ընտանիքին վերաբերեալ բոլոր պարտականութիւնը կը կատարէ, պիտի ըսեմ, թէ պատիւ է անոր ասանկ ընելը, կամ փառք է իրեն: Եւ կրկին պիտի հասկնաս թէ այս խօսքերով անոր այս գործը կը գնահատեմ: Հիմա եթէ անոր գործքերը բարի են, անոր հակառակը ոչ-բարի պիտի ըլլան: Եթէ կնկան մը երկայն մազ ունենալը իրեն բարի է եւ փառք է, կտրուած մազը անոր փառք չէ: Եթէ քրիստոնեայ կիներու երկայն մազ ունենալը երկինքի Աստուածը կը հաճեցնէ, տոնք յօժար պէտք է ըլլան անանկ ընելու Անոր սի-

րոյն համար: Ո՞րը կ'ուզես հաճեցնել, նորաձեւութեան աստուածը, թէ քու Երկնաւոր Հայրդ: «Որու որ անձերնիդ ծառայ կ'ընծայէք հնազանդելու, ծառայ էք անոր» (Հռով. 2. 16):

Երեսուն տարիի չափ առաջ, կ'ըսուի թէ այս աշխարհի աստուածը Ժողովուրդը այս մեղքին առաջնորդեց, բայց Աւետարանի պաշտօնեաները որ այն ատեն մարգոցմէ աւելի զԱստուած կը հաճեցնէին, եւ որոնց լեզուները կապուած չէին, մէկ մարդու պէս ելան սուրբ բարկութեամբ եւ նզովեցին զայն ու սկզբնաւորութեան կոկոնին մէջ խեղդեցին: Մազերը կտրող ամէն կին՝ վտանգաւոր կը սեպուէր եւ անմիջապէս կը վճռատուէր ընկերութենէն մինչև որ մազերը նորէն երկնցնէր: Եթէ այսօրուան պաշտօնեութիւնը նման ուղղութիւն մը բռնած ըլլար, քրիստոնեայ կիները երբեք իրենց մազերը պիտի չկտրէին: Աշխարհի ճշմարիտ քրիստոնեայ մարդերուն եւ կիներուն վրայ մեծ հաւատք ունիմ, եւ վստահ եմ թէ եթէ անոնց շիտակը ըսուի եւ շիտակ ալ առաջնորդուին, ինչ որ շիտակ է պիտի ընեն: Այս նպատակաւ է որ այս խօսքերը գրուած են:

Ո՞վ սկսաւ մազ կտրելու նորութիւնը: Գիտե՞մ: Փողոցի աղջիկը հնարեց զայն, մէկը որ հոգ չըներ պարկեշտութեան առաքինութեան, արգարութեան կամ Աստուծոյ մասին: Այս տեսակներուն է որ կը հետեւիս:

Կ'ըսես թէ, «Ի՞նչ տարբերութիւն կ'ընէ, վճռաւ մը չեմ տեսներ անոր մէջ»: Բայց կը խորհի՞ս թէ Աստուած անխոհեմ մէկն է: Կը խորհի՞ս թէ Անիկա մեզ պիտի ըսէ բան մը ընելը կամ չընելը, եթէ Անոր համար պատճառ մը չըլլայ: Անշուշտ չէ: Ահա աղէկ պատճառ մը թէ ինչո՞ւ կնիկներ երկայն մազ ունենալու են եւ ինչո՞ւ էրիկ մարդու հազուադէպ հագնելու չեն: Նաեւ պատճառը՝ էրիկ մարդոց կնիկներու պատկանող հագուստ չհագուելուն: Եթէ սեռերու միջեւ որոշ բաժնող գիծը չըլլայ, սեռային մաքրութիւն եւ բարոյականութիւն երբեք չկրնար պահպանուիլ: Ամէն ատեն էրիկ մարդը կնիկ մարդէն զանազանող բան մը ըլլալու է: Կին մը ամէն ատեն իբր կիւն ճանչցուելու է: Կան բաներ որոնց վրայ մարդիկ կրնան խորհրդակցիլ վայելչօրէն, սակայն կիներու ներկայութեան նոյն բաներու վրայ խօսիլ անվայել պիտի ըլլար: Երկայն մազը կիներու տրուած է իբր նշանը իր սեռին, եւ զեղեցիկ նշան մըն է: Եթէ նորաձեւութեան աստուծոյն պահանջքն տեղի տաս՝ մազդ կտրես՝ նորաձեւութեան աստուծոյն հնազանդած կ'ըլլաս, «Որու որ անձերնիդ ծառայ կ'ընծայէք հնազանդելու...»:

Հաճոյքի աստուծոյն ճառայել: Ներկայիս ամենէն ժողովրդական աստուածն է՝ կերուխումի կամ հաճոյքի աստուածը: Ամբողջ աշխարհ անոր կը հետեւի: Աշխարհ անոր խորանին առջև կ'երկրպագէ առաջուրնէ աւելի: Հին Հռովմի օրերէն ի վեր՝ ասանկ հաճոյամոլութիւն տեսնուած չէ: Ժողովուրդը հաճոյքի խենդ է:

Սակայն այս հաճոյքի աստուածը պաշտելը աշխարհի ժողովուրդին սահմանափակուած չէ: Եկեղեցին ալ հիմա կ'երկրպագէ անոր խորանին առջև: Մեր յարանուանութիւններու առաջնորդները խորհրդատուները դարձած են այն խաղերուն եւ զուարճութիւններուն, որ եկեղեցին կը ծրագրէ իր ժողովուրդին համար:

Որոշակի կը տեսնուի թէ եկեղեցին «Հաճոյքի խենդութենէն» չարաչար ազդուած է: Անիկա իրեն ժողովուրդ կ'ուզէ քաշել հաճոյք եւ զուարճութիւն հրամցնելով: Ժողովուրդը զուտ Աւետարան չէ որ կ'առնէ պէտք եղածին չափ, հապա եկեղեցին Աւետարանը շաքարով կը պատէ յուսալով թէ աշխարհ զայն աւելի աղէկ պիտի ընդունի: Բայց աշխարհ դեռ դուրս կուտայ զայն: Ըստ սովորականի շաքարը կը լիզեն եւ դեղահատը կը թքեն: Եկեղեցին աշխարհի հետ դաշնակցութեան մտեր է: Նա աշխարհի հետ բարեկամանալու կը ջանայ որ աշխարհը իրեն շահի: Բայց Սուրբ Գիրքը կ'ըսէ, «25<sup>օ</sup> ք գիտեր որ աս աշխարհիս սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, ուստի ով որ կ'ուզէ աշխարհի բարեկամ ըլլալ, ինքզինքը Աստուծոյ թշնամի կ'ընէ»: Այս պատճառաւ եկեղեցիները այսօր տխուր կացութեան մէջ են: Փարոզիչներ կը քարոզեն պարապ նստարաններու կամ մեծամասնութեամբ կիներէ եւ փոքրիկներէ բաղկացեալ ափ մը ժողովուրդի:

Ժամանակ մը առաջ քաղաքի մը մէջ կիրակի իրիկուն մը եկեղեցի յաճախողներուն և շարժապատկեր յաճախողներուն մէկ հաշիւը առնուեցաւ: Այն քաղաքին մէջ քառասուն եւ եօթը եկեղեցիներ կային և երեսունըհինգ շարժապատկերի տուններ: Բոլոր եկեղեցիներու մէջ զանազաններու թիւն էր 15000, շարժապատկերատուններու մէջ զանազաններուն թիւն էր 38000:

Այո, եկեղեցիները որոշած են ժողովուրդ հրապուրելու համար՝ զուարճութեան վայրերու հետ մրցման մասնել եւ հաճոյք ու զուարճալիք հրամցնել: Ասոր իբր արդիւնք մեր եկեղեցիներէն շատեր՝ երրորդ կարգի զուարճութեան վայրերու մակարդակէն վար իջած են: Եւ ամբողջ գործունէութիւնը այդ ուղղութեամբ է: Շատ մը

արդի եկեղեցիներ կահաւորուած են խոհանոցներով, լողալու աւազաններ ունին և մարզարաններ ու խաղալու գործիքներ: Կարգ մը տեղեր ալ պարասրահներ եւ պատկեր ցուցնելու վայրեր աւելցուած են: Պաղպաղակի ընթրիքներ, ուտելիքի ընթրիքներ, նաւի ընթրիքներ են: Եթէ Պողոս առաքեալ մեր ատենը ապրող մէկը ըլլար, իրաւունքով պիտի գոչէր, ինչպէս գոչեց հին ատեն, «Միթէ ուտելու ու խմելու համար տուն չունի՞ք»:

Քիչ առաջ լսեցի հոգեւոր պաշտօնեայի մը արտայայտութիւնը, թէ շուտ պիտի գայ այն ատենը, երբ երիտասարդներու օգուտին համար մարզարաններ եւ լողալու աւազաններ չունեցող եկեղեցի մը յետամնաց պիտի նկատուի: Ըսաւ նաեւ, եթէ բոլոր եկեղեցիները այս բաները ունենային, երիտասարդները իրենց հրապուրել դժուար բան մը պիտի չըլլար: Ես ինծի խորհեցայ, «Այո, Սատանան պիտի գրաւէ ամէն բանը»:

Մեծ է տարբերութիւնը այսօրուան եկեղեցիին եւ վաղեմի եկեղեցիին միջեւ: Մէկը ըսած է թէ վաղեմի եկեղեցին վերնատուն մը ունէր, ուր Քրիստոսի հետեւորդները հոն աղօթելու կուգային: Այսօր կերուխումի տան վերածուած է վերնատունը: Խաղը գրաւած է աղօթքի տեղը և խնձոյքը՝ Ծովապափութեան: Խոհանոցի կրակը վառած եւ Տէրոջ սեղանին հուրը մարած է: Պաղպաղակը պաղեցուցած է հոգեւոր տաքութիւնը: Շատ է կարկանդակը և քիչ է երկրպագութիւնը:

Մեծ է տարբերութիւնը այսօրուան դաւանանքին եւ մեր նախահարց դաւանանքին միջև: Վաղեմի եկեղեցին սորվեցուց եւ ապրեցաւ անձնութեան իր զանազան կրօնքը: Աշխարհէն հեռու մնալ քարոզեց եւ ապրեցաւ: Աշխարհի եւ եկեղեցիի միջեւ բաժանող դիմը վերցուած է: Փոխանակ աշխարհը վեր վերցնելու, եկեղեցին իր վարդապետութիւնը իջեցուցած է աշխարհի մակարդակին: Եկեղեցին փափկասէր է, անոր թեւը անդամալոյժ եղած է եւ չկրնար բռնել Հոգւոյն թուրը: Իր հաճոյքովը արբեցած է: Լաւողիկէի եկեղեցիին պէս կ'ըսէ, «Ես հարուստ եմ ու մեծցայ, եւ բանի մը կարօտ չեմ»:

Տէրոջը այն եկեղեցիին տուած խորհուրդը այսօրուան եկեղեցիին եւս կը յարմարի, «Ինծմէ կրկակի մէջ փորձուած ոսկի ծախու առ որ հարստանաս, ու ճերմակ հանդերձներ՝ որ հագնիս... եւ աչքերուդ դեղ դիր որ տեսնես: Ես իմ սիրածս կը յանդիմանեմ ու կը խրատեմ, ուստի նախանձաւոր եղիր եւ ապաշխարէ»:

Ազատ թարգ. Վեր. ՆԻԳՕԼԱ ՓԱՓԱԶԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Անկանոն գիրքեր Բ. ՄԱՍ:—

Մեզմէ եւան ոմանք բայց մեզմէ չէին, վառ սնդի եթէ մեզմէ ըլլային մեզի հետ պիտի մնային, հապա մեզմէ եւան որպէսդի յայտնի ըլլայ թէ տնոնք ամէնը մեզմէ չէին: Ա. Յովհ. Բ. 19

Անկանոն գրոց մասին նախորդ թիւով ներկայացուած պատմական գիծերը լաւ եւս ըմբռնելու համար հարկ է մեզի ծանօթանալ անոնց ներքին արժէքին ալ: Կանոնական գրոց քննութեան մէջ նկատի կ'առնուին անոնց պատմական արժէքը — խմբագրութեան թուական, հեղինակ, պատմական ճշգրտութիւն եւն — եւ ալ զրքին պարունակած վարդապետութիւնն ու բարոյականը: Արդ Անկանոն գրոց ներքին արժէքը երբեք կարելի չէ բաղդատել ներշնչեալ գրոց արժէքին հետ:

Փարիզի Սբ. Գրական ընկերութիւնը փափաքելով որ Անկանոն գիրքերը աւելի ընդհանրացուին, և քիչ մըն ալ նեղսրտելով որ Սուրբ Գիրքերէն դուրս նետուած են անոնք, պաշտօն յանձնեց Լ. Ռանտօնի կրկին թարգմանել զանոնք այնպէս որ կաթոլիկ թէ բողոքական բոլոր ծանօթ թարգմանութիւններու ոճի և ճշգրտութեան թերութիւնները խնամով դարմանուին եւ այսպէս հետգհետէ աւելի սիրելի դառնան անոնք քրիստոնէայ աշխարհին: Թարգմանիչը օգտուած է Ժ. դարու միջոցին Անկանոն գրոց շուրջ կատարուած բոլոր աշխատութիւններէն եւ իրապէս յաջող եւ գեղեցիկ թարգմանութիւն մ'է որ կը ներկայացնէ Քրիստոսի աշխարհին իր 1909ի հրատարակութեամբը: Չախորդ եւ զօռարին հատուածները կերպ մը մեղմացնել աշխատած է բաղմաթիւ ծանօթութիւններով, ու շատադուած է Անկանոն գիրքերը իր ընդհ. ներածականին մէջ: Տակաւին սակայն իր բոլոր պատճառներէն ետքը ահա թէ ինչ կը խոստովանի: «Պէտք է սակայն խոստովանիլ թէ, Սուրբ Գրոց մեծ մարգարէներուն հոգեւոր թռիչքը չենք գտներ: Կը թուի թէ մեր մատենագիրները կորսնցուցած են ստեղծագործող նախաձեռնութեանց գաղտնիքը: Ալ միայն հետեւողներ են, ալ չեն կրնար սլանալ մինչեւ Աստուած եւ Անոր ուղղակի յարաբերութենէն ծծել կեանքի եւ խորհուր-

դի բոցը: Կը գիտակցին թէ երկրորդական շրջանի մը կը վերաբերին, ուր Աստուած դադրած է ինքզինքը անձնապէս մարդոց յայտնելէ եւ Անոր կամքը ճանչնալու համար, ալ միայն օրինաց ուսման կը դառնան(1):

Դժուար է սակայն նոյն խստութեամբ դատել բոլոր գիրքերն ալ: Սիրազի գիրքը, Բարուք եւ Սողոմոնի իմաստութիւնը կը գերազանցեն միւսները: Այս վերջին գիրքը կը խօսի հոգւոյ անմահութեան մասին: Բ. Մակաբայեցւոց՝ յարութեան վրայ, եւ Սիրազ ներողամտութեան վրայ պատուական տողեր ունի: Սակայն այս բացառութիւններէն դուրս գրոց մեծամասնութիւնը զուրկ են զրական եւ բարոյական մեծ արժէքէ, անհամ ու տափակ են: Հոն չենք գտներ Սբ. Գրոց յատուկ այն ներշնչիչ տպաւորութիւնը:

«Անկանոն գիրքերը մարդկային գործի արդիւնք են: Ո՛չ միայն ներշնչման նուազումով մը, այլ իրենց պարունակութիւնովն իսկ կը զատուին մարգարէներէն: Գալով Մեսիական յոյսին, Փրկչի մը ակնկալութեան, այս բոլորովին կը բացակայի: Սա աւելի զարմանալի է, այն պատճառաւ որ այս գիրքերը լոյս տեսած շրջանին Հրեաները (որոնց պատմութեամբ կ'զբաղի) խոռվքի եւ տազնապի ժամանակներէ կ'անցնէին: Ըստուգիւ չենք գիտեր թէ Անկանոն գիրքերէն ինչ հատուածներ պիտի կարենայինք կարգաւ տառապեալներու, հիւանդաց եւ մահամերձներու»(2):

Մանաւանդ երկու կարեւոր պատճառներ կան որք մեծապէս կը նուազեցնեն Անկանոն գրոց արժէքը: Առաջինը այդ գիրքերուն մէջ երեցած

Մարդուն բարձրացումն

է: Ահա երկու խօսք ազատ թարգմանութեամբ:

Ան (Դաւիթ) կ'երգէր Աստուծոյ անունը

Եւ առաւօտէն կը հնչեցնէր Անոր տաճարը

Ուստի Աստուած ալ ներեց իրեն մեղքերը:

(Յս. Սիրազ ԽԷ. 10-11)

Աստուած Դաւիթի երգերո՞ւն համար թէ իր դառն զղջումով ապաշխարելուն համար ներեց: Ինչո՞ւ կը մոռցուի մարդուն կատարելիւ որ էական է Աստուծոյ առջեւ: Առնենք ուրիշ օրինակ մը:

Ես բնականէս բարի տղայ մըն էի

Եւ իբր բաժինս ստացած էի բարի հոգի մը,

.....

(1) Les Apocryphes de l'Ancien Testament Int. Gen. XXIX

(2) D. Lortsch Histoire de la Bible en France 1910 էջ 491:

Կամ յաւէտ, քանի որ ես բարի էի,  
մաքուր մարմնոյ մը մէջ մտած էի,  
Բայց գիտնալով որ բնական բարութիւնս  
չպիտի կրնայի պահել առանց Աստու-  
ծոյ օգնութեան  
Տէրոջը մօտեցայ եւ աղօթեցի...

(Սողոմոնի Իմաստութիւնը Ը. 20)

Հոս կը տեսնենք որ ոչ միայն մեղքի գի-  
տակցութիւն չունի հեղինակը, այլ նաեւ ինք-  
զինքը բնականէն բարի կը սեպէ որ բոլորովին  
հակառակ է Սուրբ Գրոց (Սաղ. ԾԱ. 5: Մատթ. ԺԺ. 17. Հոով. Գ. 23 եւն): Ապա այստեղ Սուրբ  
Գրոց օտար գաղափար մ'է որ մէջտեղ կը դրուի—  
հոգիներուն նախազոյութիւնը: Ասոնք բաւական  
են զգուշացնելու զմեզ: Ի վերջոյ տեսէք թէ ինչ-  
պէս կը փակուի Բ. Մակարայեցիին գիրքը:

«Եթէ պատմութիւնս գեղեցիկ եւ լաւ կար-  
գադրուած է՝ նպատակիս հասալ: Եթէ տկար  
եւ միջակ է՝ կրցածս ըրի: Ինչպէս որ գինին  
ու ջուրը զատ խմուելով անպիտան ըմպելի-  
ներ են, մինչ ջրախառն գինին մեծապէս հա-  
ճոյք կ'ազդէ, նմանապէս լաւ շարադրուած  
պատմութիւն մը լսողաց ականջները կը հը-  
մայէ: Վերջացուցի»:

Որքա՛ն կը տարբերի այս Սբ. Գրոց հեղինակ-  
ներէն որոնք բնաւ չեն հարցներ իրենք իրենց  
թէ ինչպէ՞ս գրած են, մարդոց հաճութիւնը շա-  
հա՞ծ են, ու յաջողա՞ծ են գրական անուն վաս-  
տըկելու: Անոնց միակ նպատակն էր անվարան  
յայտնել Աստուծոյ կամքը եւ յայտնութիւնը,  
փոյթ չընելով թէ մարդիկ ի՞նչպէս պիտի ընդու-  
նէին ճշմարտութիւնը: Եւ երբեմն պատգամա-  
բերները ի՞նչ հակառակութեանց բաղխեցան ի-  
րենց պատգամը աստուածահաճոյ կերպով տա-  
լու համար: Աստուծոյ ո՞ր ծառան իր դէմ չգտաւ  
Յեզաբել մը: Ի՞նչ պիտի պատահէր եթէ անոնք  
ալ տենչային «Լսողաց ականջը հմայել»: Եւ տա-  
կաւին այդ ազատ եւ անկեղծ ոճն է որ միշտ՝  
ուշ կամ կանուխ կը յաջողի խտասիրտին խղ-  
ճին թելերը թրթռացնելու զայն իր Աստուծոյն  
գիտակցութեան բերելով:

Երկրորդ կարեւոր առարկութիւն մ'է, Անկանոն  
գրոց մէջ տեսնուած բայց ներշնչեալ գիրքերու  
բոլորովին

Օտար վարդապետութիւնը

Արդարեւ Անկանոն գրոց մէջ հաստատանք  
կան որոնք հակառակ են Սուրբ Գրոց հիմնական  
վարդապետութեանց:

Ա. հրեշտակաց եւ մեռած սուրբերու բարե-  
խօսութիւնը ի նպաստ երկրի վրայ ապրողնե-

րուն: (Տովբիթ ԺԲ. 12: Բ. Մակարայեցիք ԺԵ.  
14: Բարուք Գ. 4):

Բ. Մահէն յետոյ, հոգիներու փրկութեան կա-  
րելիութիւնը, և յօգուտ ննջեցեալներու մատուց-  
ուած աղօթքներու եւ զոհերու նպաստաւոր ազ-  
դեցութիւնը: (Բ. Մակ. ԺԲ. 42-46)

Գ. Ողորմութեան արժէք, մեղքերը սրբելու  
խնդրոյն մէջ: (Տովբիթ Դ. 7: ԺԲ. 8-14: Յս. Սի-  
րազ Գ. 30):

Այս կէտերը Հոովմէական եւ Բարեկարգեալ  
եկեղեցիներու մէջ երկար վիճաբանութեանց  
նիւթ եղած են: Բարեկարգեալք մերժեցին այս  
սխալ վարդապետութիւնները ու զանոնք պարու-  
նակող գիրքերը: Հոովմէական եկեղեցին ընդու-  
նեց գիրքերը մեր կարծիքով մանուսկրաւ այս ա-  
ւանդութեանց եւ վարդապետութեանց սիրոյն:  
Այս եղաւ Հոովմէական եկեղեցիին դժբաղդու-  
թիւնը, զի յայտնի է աւա՛ղ թէ ի՛նչ ծանր նըս-  
տաւ իրենց վրայ: Ի մէջ այլոց եղաւ Աստուծոյ  
առջեւ իր հոգեւոր սնանկութեան պատճառներէն  
մին: Ալ չիշշենք անոնց առթած արդարացի քն-  
նադատութիւնները եւ զարհուրելի գայթակղու-  
թիւնները որ շատերու հաւատքը ի սպառ կոր-  
ծանեց: Հապա բազմամիլիոն փնտռող հոգիները,  
որք այս անկարելի ուսուցմանց դժխեմ լափիւ-  
րինթոսին մէջ կը խարխափին ի խնդիր լոյսի,  
յոյսի և ապահովութեա՛ն: Լաւ կը հասկնանք թէ  
ինչո՞ւ Անգլիոյ մէջ ճօն Լայթֆուլ կ'աղաղակէր  
թէ Անկանոն գրոց համար Աստուծոյ Աբրահամի  
տուած հրամանը կիրարկելու է, «Վոնտէ՛ այս ա-  
ղախինը ու անոր որդին»:

Շատ կարեւոր է նկատել որ Սուրբ Գրոց մէջ

Հակասական վարդապետութիւն

չկայ: Իրաւ է թէ Սուրբ Գրոց բոլոր գիրքերն  
ալ նոյն վարդապետութիւնը չեն պարունակեր,  
զի Սուրբ Գիրքը մեզի կը բերէ Աստուծոյ մար-  
դոց տուած յայտնութեան պատմութիւնը: Այս  
յայտնութիւնը աստիճանական է: Բայց յայտ-  
նութեան աստիճանաւորում ո՛չ մէկ բարոյական  
կամ տրամաբանական օրէնքով հակասութիւն  
կը նշանակէ, ինչպէս ոմանք միտում ունին կար-  
ծելու: Ընդհակառակը այս մէթոտը բոլորովին կը  
պատշաճի Մեծ Դաստիարակին մանկավարժա-  
կան դրութեան: Ան կը ճանչնայ սիրտերը, գիտէ  
մարդը իր խորհուրդներովը: Ուստի մինչ Աստու-  
ծոյ հօր ձեռքին տակ, պարագաներու եւ տա-  
րիներու միջոցաւ, անհատին և ժողովուրդին հո-  
գեւոր իրողութեանց ընդունակութիւնը կը զար-  
գանայ, Աստուած ալ հետզհետէ կը լայնցնէ եւ  
կը խորացնէ իր յայտնութիւնը, մարդուն առջև

որոշ ընթացքով մը բանալով Իր էութեան եւ ծը-  
րագիրներուն բնոյթը: Ասոր համար ալ տնտե-  
սութեան շրջաններ կան Սուրբ Գրոց մէջ որոնց  
պարունակած յայտնութիւնը զմայլելի ներդաշ-  
նակութեամբ մը կը յանգի Նոր Կտակարանի  
վերջնական լոյսին, «Բոլոր շնորհաց» եւ Տէր Յի-  
սուս Քրիստոսի մէջ «Մարմնացեալ» Աստուծոյն:

Նկատի ունենալով ուրեմն որ այս կարեւոր ա-  
ռարկութիւնները որ կան Անկանոն գրոց ղէմ,  
որոշ է թէ անոնք տեղ չեն կրնար ունելալ «Կա-  
նոն»ին մէջ: Լաւ եղաւ, եւ ժամանակ ալ էր որ  
կարուէր Սբ. Գրոց կցուած այդ մեռած ծանրու-  
թիւնը որ Սբ. Գրոց կցուած էր լոկ աւանդու-  
թեանց ժանգոտ շղթայովը: Նկատելի է որ այդ  
շղթան երբեք շատ հաստատուն բան չէ սեպ-  
ուած(1)

Սակայն, եթէ անոնք տեղ չունին Սբ. Գրոց  
մէջ եւ անոնց մեծամասնութիւնը «Կարգալ. իսկ  
չարժեր» ինչպէս կ'ըսէ Դաւիթ Մարգին իր նե-  
րածականին մէջ, տակաւին անոնք կը պարու-  
նակեն պատուական էջեր զորս կարելի է կար-  
գալ եւ օգտուիլ: Անոնց ընթերցումը օգտակար  
է մանաւանդ անոր համար որ թանկագին օղակ  
մը կը կազմեն չին և Նոր Կտակարաններուն մի-  
ջեւ, մեզի ցոյց տալով Իսրայէլի ներքին վի-  
ճակն ու քաղաքական ելեւէջները:

Աննկուն նախանձախնդրութեամբ մը ի սպաս  
մերժենք անոնց կանոնականութիւնը, եւ ուրա-  
խութեամբ գնահատենք անոնց բերած պատմա-  
կան տեղեկութիւնները: Ամէն բան փորձեցէք,  
բարին ամուր բռնեցէք:

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

.....

(1) D. Lortsch իր պատուական հատորին մէջ հետեւեալ  
ցանկը կուտայ այն հեղինակաւոր անձանց որք երբայա-  
կան կանոնին 22 գիրքերը կ'ընդունին միայն:

Jérôme, le Pape Grégoire le grand (590-604), Bède  
le Vénérable (673-735), Alcuin (725-804), Raban-Maur  
(856), Pierre de Cluny (1092-1156), Hugues de St-Victor  
(1140), Ricard de St-Victor (1173), Jean de Salisbury  
(1100-1180), Nicholas de Lyre (1340), Pie de la Mirandole  
(1403-149+), Cardinal Ximénès (1436-1517), Caje-  
tan (1470-1534)..

ՎՐԻՊԱԿ.— Անցեալ թիւին էջ 58-ը սինակ  
4-րդ տող փոխան կարգալու «Կաթոլիկ եկեղեցին  
այս խնդիրը կրկին քննեց իր հոգակաւոր Տիե-  
զերական ժողովին որոշումը են» կարգալ «Կաթ.  
եկեղեցին այս խնդիրը կրկին քննեց իր նախկին  
հոգակաւոր Տիեզերական ժողովին ընթացքին են:

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ

Բ. ՀՐԱՇԱԼԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

2. Պօղոսի յաջողութեան երկրորդ գաղտնիքն  
էր սա հաւատքը թէ մարդկութիւնը կորսուած է  
եւ կրնայ փրկուիլ միմիայն Քրիստոսի խաչով:  
Ան կը հաւատար թէ մարդը կամաւ եւ գիտակ-  
ցօրէն ապստամբած ու օտարացած է Աստուծմէ,  
եւ՝ ասոր իբր հետեւանք՝ մեղաց գերութեան  
տակն ինկած, «Մարմնոյ ցանկութիւններովը կը  
պտըտի, բնութեամբ բարկութեան որդի» Եփես.  
Բ. 3, եւ ենթակայ՝ սուրբ եւ անաչառ Աստուծոյ  
հաւոր դատաստանին: Սակայն կը հաւատար  
նաեւ թէ Յիսուս կարող է՝ Իր մահուան եւ յա-  
րութեան զօրութիւնովը՝ կործանած ու ղժբաղդ  
մարդը վերակենդանացնել, յարուցանել, «Սուր-  
բերուն քաղաքակից եւ Աստուծոյ ընտանիքին»  
անդամ դարձնել (Եփես. Բ. 3, 6, 19):

Առաքեալին այդ հաւատքը կը բղիւնէր իր  
անձնական փորձառութեանէն: Անիկա ապրումն  
ունեցած էր թէ ինքը «Մեղաւորներու գլուխ» էր,  
մեղքի տակ ծախուած, յաւիտենական կորուստի  
արժանի, «Խղճալի մարդ մը», բայց Տէրոջը շը-  
նորհքը խիստ շատ եղած էր իր վրայ, Յիսուսի  
մեղաւոր սեպուելովը Աստուծոյ արդարն ու Քր-  
իստոսի ժառանգակիցը եղած էր (Տես Հռով. Է.  
14-24: Բ. Կոր. Ե. 21: Ա. Տիմ. Ա. 14, 15):

Ահա այս հաւատքը մին էր Պօղոսի ամենէն  
կարեւոր մղիչ ուժերէն: Ան կ'երթար «Յոյնն ու  
բարբարոսին, իմաստունին ու անմիտին» (Հռով.  
Ա. 14), քանզի խորապէս համոզուած էր թէ ա-  
նոնք կը հեծէին «խաւարին իշխանութեանը»  
տակ, բայց Քրիստոս կարող է անոնցմէ ամենէն  
ինկածն իսկ անկէ ազատել և Իր լուսեղէն «Թա-  
գաւորութեանը փոխադրել» (Կող. Ա. 13): Կ'եր-  
թար, արհամարհելով հալածանքն ու մահուան  
սպառնալիքները, քանզի իրեն համար խաչուած  
Փրկչին սէրը զինք կը ստիպէր Անոր կողմանէ  
ազազակելու մեղաւորներուն որ հաշտուին Աս-  
տուծոյ հետ (Բ. Կոր. Ե. 14, 20) եւ ազատին մե-  
ղաց գերութենէ ու յաւիտենական դատապար-  
տութենէ: Քանի որ իր շղթաները փշրուած էին  
Քրիստոսի զոհաբերութեամբ, ինքն ալ իր ամ-  
բողջ սրտովը միացած էր իր Ազատաբաբին՝ իբր  
Անոր զինուորը՝ օգնութեան հասնելու անոնց, ո-  
րոնք կը հառաչէին զնդանին մէջ:

Այս հաւատքը Պօղոսի Աւետարանին կուտար  
անսման ազդուութիւն, զօրութիւն ու յաջողու-  
թիւն: Այսօր անպտուղ է շատ մը քարոզիչներու,  
աւետարանիչներու եւ միսիոնարներու աշխա-

տանքը, վասնզի թէ՛ իրենք անձամբ չեն տառապած մեղքի բեռան տակ եւ թէ իրենց սրտերը չեն դողդղաւ՝ զգալով մեղաց գերիներուն վիշտը եւ անոնց սպառնացող աստուածային ահաւոր դատաստանը: Անոնց հետ իրենք ալ ցաւ չեն քաշեր: Ուստի փորձառու չեն այն մեծ փրկութեան, ուրախութեան եւ խաղաղութեան, որոնց կրնայ տիրանալ մարդ, երբ հաւատայ ու հնազանդի Քրիստոսի: Սակայն Պօղոս այդ ամենուն թափանցեց, փորձառու եղաւ եւ հաւատաց իր ամբողջ էութեամբը: Ուստի եղաւ նաեւ ամենէն յաջող միսիոնարը:

Այդ հաւատքը եւ ասկէ բխող սէրն ու հաւատքն էին նաեւ ակն ու աղբիւրը Պօղոսի անմահ հնազանդութեանը, որուն վրայով խօսեցանք «Բանբեր»ի Փետրուարեան թուոյն մէջ եւ որուն կուգենք այս կապակցութեամբ ալ անդրադառնալ մէկ երկու նախադասութեամբ:

Քանի որ ան կը հաւատար թէ Քրիստոս Յիսուս մարդն է իր եւ բոլոր կորսուածներուն փրկութեան միակ միջնորդը (Ա. Տիմ. Բ. 5), միակ Փրկիչը եւ միակ անսխալ առաջնորդը, սերայօժար հնազանդեցաւ Անոր ձայնին, գնաց միսիոնարական դաշտ եւ հոն ծառայի մը հնազանդութեամբ Անոր առաջնորդութեան ենթարկեց իր պողպատեայ կամքը, միշտ ընելով կամ ձգելով ինչ որ իր Տէրը կ'ուզէր: Այսպէս՝ Փռուզիոյ ու Դադատիոյ մէջ Աստուծոյ խօսքը չխօսեցաւ ու Բիւթանիա երթալէ հրաժարեցաւ, վասնզի Յիսուսի Հոգին թոյլ չտուաւ: Կորնթոսի մէջ մէկ ու կէս տարի մնաց, քանի որ Տէրը այդպէս հրամայեց: Դարձեալ, նոյն հրամանին հնազանդելով էր որ Երուսաղէմ գնաց, թէն գիտէր թէ հոն կապեր ու նեղութիւններ իրեն կ'սպասէին (Գործ. ԺԶ. 10: ԺԸ. 9-11: Ի. 22, 23): Կը համարձակինք ըսել թէ ուրիշ և ոչ մէկ անձ այնքան կամազուրկ կերպով յանձնած է իր կեանքի ղեկը Յիսուսի ձեռքը, որքան Պօղոս: Բայց անոր այդ հնազանդութիւնը կը բղխէր ոչ թէ կոյր ստրկամտութենէ, հապա երախտագէտ ու իմաստուն զաւկի մը սէրէն ու վստահութենէն: Կը հնազանդէր, վասնզի կը հաւատար, փորձառութեամբ գիտէր թէ Յիսուսէ հեռի միայն գերութիւն եւ կորուստ կայ, միայն մութի մէջ խարխափում, իսկ Անոր քով լոյս, սէր, իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ փրկութիւն (Ա. Կոր. Ա. 30):

Ահա այս մէկզմէկ լրացնող հաւատքն ու հրնազանդութիւնն էին Պօղոսի միսիոնարական գործի յաջողութեան երկու կարեւոր պատճառները: Դանք այժմ երրորդ զաղտնիքին:

3. Աստուծոյ Հոգւոյն մասնաւոր զօրութիւնը Պօղոսի հետ էր: Ճղճիմ պատատուկը կը փաթթուի իր մօտակայ հաստարմատ կաղնիին եւ անոր միջոցաւ տառնեակ մէթը վեր կը բարձրանայ դէպի լոյս ու ջերմութիւն: Այսպէս ալ Պօղոս տեսաւ իր տկարութիւնն ու ոչնչութիւնը եւ ամբողջ սրտով ու հոգիով ապաւինեցաւ ու անձնատուր եղաւ Քրիստոսի: Ան ալ յուսախաբ չըրաւ Իր ծառան, թողուց որ ան հաւատքի ու հրնազանդութեան բանալիներով բանայ Իր ուժի շտեմարանները եւ օգտուի անոնցմէ, որքան որ կ'ուզէ, այնպէս որ անիկա կրնար աղաղակել, «Ամէն բանի կարող եմ Անով՝ որ զիս զօրացուց»:

Նախ զարմանալի է զօրութիւնը, որ ի յայտ կուգայ Պօղոսի տկար ու մնայուն հիւանդութիւնով մը ծանրաբեռնուած (Բ. Կոր. ԺԲ. 7) մարմինին մէջ: Իր համեստ օրապահիկը շահելու համար՝ ան շատ զիշերներ վրանագործութեամբ կը զբաղէր. Իր ցորեկները ծանրաբեռնուած էին այցելութիւններով, հոգեւոր խօսակցութիւններով, քարոզներով եւ վտանգաւոր ու յոգնեցուցիչ ճամբորդութիւններով: Յաճախ կը հալածուէր, կը բանտարկուէր, կը ձեծուէր ու կը քարկոծուէր: Շատ անգամ կը չարչարուէր անօթութիւնով ու հոգերով (Բ. Կոր. ԺԱ. 23-29): Մարդու մը կրելու կարողութենէն աւելի չէ՞ այս ամէնը: Պօղոսի համար այս հանելուկին լուծումը շատ պարզ է—Աստուծոյ ուժը կը յայտնուի իբր շնորհաց պարգեւ մարդկային տկարութեան մէջ (Բ. Կոր. ԺԲ. 9), ան հոն կը ներգործէ, ուր մարդ կորսնցուցած է հաւատքը իր անձնական ուժին վրայ և ամէն բան Աստուծմէ կը սպասէ(1) ու ինքզինք կը նկատէ իբր երկնային գանձը կրող հոգեղէն աման մը, որպէսզի զօրութեան առաւելութիւնը Աստուծմէ ըլլայ եւ ոչ թէ մարդէ:

Երկրորդ, Աստուծոյ ուժը կը յայտնուէր եւ Քրիստոսը կը փառաւորուէր ոչ թէ միայն Պօղոսի տկար մարմնոյն՝ հապա նաեւ անոր միտքին ու հոգւոյն մէջ: Քանզի անիկա կ'արհամարհէր իր մտաւոր ու հոգեկան բնական կարողութիւններն ալ եւ ինքզինքը անարգ, ցածազգի ու ոչինչ կը նկատէր (Ա. Կոր. Ա. 27, 28): Ան խորապէս գիտակից էր թէ ինքը բան մը չէր, իր բաւականութիւնը միայն Աստուծմէ էր, եւ թէ ինքը անձամբ ոեւէ գործ զլուխ չէր կրնար հանել, միայն Աստուծոյ շնորհքն էր որ իր միջոցաւ կը գործէր (Ա. Կոր. ԺԵ. 9, 10): Գիտակից

(1) Տես Վարդիք, «Պօղոս ներկայ միսիոնարութեան լոյսին մէջ» էջ 26, 27:

էր թէ ոչ թէ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերն էին որ մեղաւորները Քրիստոսի խաչին առջեւ կը խոնարհեցնէին, հապա Աստուծոյ Հոգին ու զօրութիւնը: Ամէն միսիոնարէ աւելի Պօղոսի կը յարմարէին Ճան Մօթի հետեւեալ խօսքերը, «Ուժի գաղտնիքը այն միսիոնարներու, որոնց աշխատանքը մասնաւոր ընդարձակութիւն ու խորութիւն ունեցած է, կը զրտնուի ո՛չ թէ իրենց գործին ու խօսքին, հապա Քրիստոսի մէջ. Ան է որ ներկայ է անոնց մէջ ու անոնց քով: Անոնք կը տեսնեն Անոր աչքերով, կը զգան Անոր սրտով եւ կը գործեն Անոր ուժով: Քրիստոս անոնց ամէն բանն է: Անոնք կը շրջին մարդոց մէջ իբր մարմնացումը Անոր աստուածային զօրութեան, որուն կենսատու շօշափման ազդեցութեան տակ մեռեալ հոգիները կեանք կը ստանան»:

Բառակաւ ատումով Աստուծոյ զօրութիւնը Պօղոսի միջոցաւ կեանք տուաւ հազարաւորներու, որոնք «Յանցանքներու եւ մեղքերու մէջ մեռած էին» (Եփես. Բ. 1):

Այդ կենսաբաշխ ուժը իր ազդեցութիւնը կը բանեցնէր ընդհանրապէս Թաքուն կերպով. մարդոց սրտերուն մէջ ներգործելով՝ զանոնք կը համոզէր առաքեալին խօսքերուն ճշմարտութեանը, կը քանդէր անոնց խորհուրդները, նախապաշարումի ու մեղքի ամրոցները եւ Աստուծոյ գիտութեան դէմ հպարտացած բարձր բաները ու բոլոր միտքերը Քրիստոսի հնազանդութեանը գերի կ'ընէր» (Բ. Կոր. Ժ. 3-5):

Սակայն եւ այնպէս այդ զօրութիւնը յաճախ կը գործէր նաեւ արտաքին երեւութով—նշաններով ու հրաշքներով: Մի քանի անգամ Պօղոս անոնց գոնէ կ'ակնարկէ, օրինակ՝ Կորնթացոց ու Հռովմէացոց կը գրէ, «Յիրաւի ձեր մէջ առաքեալի նշաններ գործուեցան» Բ. Կոր. ԺԲ. 12: Հեթանոսները հնազանդեցնելու համար խօսքով, նշաններու ու հրաշքներու զօրութիւնով՝ Հռովմ. ԺԵ. 18, 19: Բայց Ղուկաս, անունով կը յիշէ անոնցմէ ոմանք. Պօղոս իժէ մը կը խայթուի, սակայն թոյնը իր վրայ ազդեցութիւն չգործէր, աղօթքով կը բժշկէ Ղերմով ու թանջքով հիւանդացած մարդ մը Գործ. ԻԸ. 4-10: Կը հրամայէ եւ կաղը կը քալէ ԺԴ. 7-17: Աստուծոյ խօսքին արգելք հանդիսացող խաբեբայ մողը՝ Եղիմաս կուրութեամբ կը զարնուի ԺԴ 6-12, ու հարցուկ ուղիւ կ'ելլէ գուշակութիւն ընող կնոջմէն: Կ'աղօթէ եւ բանտին դռները կը բացուին ու բանտարկեալներուն կապերը կը լուծուին Գործ. ԺԶ. 16, 17:

Այսպէս Պօղոսի կեանքին մէջ կը կատարուին Յիսուսի խոստումները, «Իմ անունովս դեւեր պիտի հանեն, նոր լեզուներ պիտի խօսին, ձեռքերնին օձեր պիտի բռնեն, եւ եթէ մահառիթ դեղ մը խմեն, իրենց պիտի չփսսուէ, հիւանդներու վերայ ձեռք պիտի դնեն ու անոնք պիտի առողջանան» Մարկ. ԺԶ. 17, 18:

Բայց այս հրաշքներու ու նշաններու զխաւոր նպատակը չէր Պօղոսը տառապանքէ ազատել, հապա Աստուծոյ խօսքին համար ճամբայ բանալ: «Աննշան հրեայ շրջիկ ուսուցիչ մը կը պտտէր Փոքր Ասիոյ եւ Եւրոպայի քաղաքներուն մէջ եւ նորօրինակ պատգամ մը կը բերէր: Այն օրերուն այդպիսի բան մը ուշագրաւ չէր, մարդիկ վարժուած էին լսելու թէ ինչպէս նոր կրօններու քարոզիչներ իրենց ապրանքը կը գովաբանէին»: Խնչպէս պիտի կարենար արհամարուած հրեան գտնել մարդիկ, որոնք գոնէ յօժար ըլլային խորհելու իր պատգամին վրայ, եթէ անոր Տէրը տուած չըլլար պարզեւը հրաշքներու, որոնք անոր Աստուծոյ զօրութիւնն ու մեծութիւնը կը ցուցնէին: Մենք կը կարդանք թէ ինչ հզօր տպաւորութիւն ըրին անոր հրաշքները Պափոսի, Եփեսոսի, Լիւսղրայի եւ Միլիտէի մէջ»: Հեթանոսները սկսան ուշադրութիւն ընել այն մարդուն որուն քարոզած կրօնը իմաստակութեան եւ բարոյագիտութեան շաղակրատութիւն չէր, հապա զօրութիւն:

Թերեւս ընթերցողներէն միոյն կամ միւսին մէջ երբեմն կը սպրդի սա հարցումը—եթէ իրաւամբ պատահած են այդ հրաշքները, ինչո՞ւ անոնք երբեմն մեր օրերուն մէջ ալ տեղի չեն ունենար: Այդպիսի անկեղծ կասկածոտներու գոնէ քչիկ մը օգնելու համար կրնանք համարձակօրէն ըսել թէ այս ժամանակիս մէջ ալ միլիոնաւ թափան դաշտերու մէջ երբեմն կը կատարուին նման հրաշքներ: Անկեղծօրէն փնտոող քաղաքակիրթ անձի մը դարձին համար՝ հրաշքը սնհրաժեշտ չէ, քրիստոնէութեան ներքին արժէքը բաւական է դինքը համոզելու համար. բայց այլ է պարագան քաղաքակիրթութեան նախնական աստիճաններու վրայ գտնուող հեթանոսներու համար: Հին արտաքին աչքառու ոյժ մը պէտք է յաճախ զանոնք համոզելու համար թէ քրիստոնէականերու Աստուածն է ճշմարիտը եւ ոչ թէ ֆէթիշը: Ուստի Աստուած օգնութեան կը հասնի մտքին այդ վիճակին եւ իր զօրութիւնը երբեմն կը յայտնէ նշաններով ու հրաշքներով: Քրիստոնէականերու մանկական աղօթքով հեթանոս հիւանդներ կը բժշկուին, եւ վտանգի տակ զրտ-

նուստներ փորձառու կ'ըլլան աստուածային յայտ-  
նի օգնութեան:

Դոնէ մի քանի օրինակներ յիշենք այդ մա-  
սին՝ քաղելով վարենքի դրօշն:

Սուսմթրայի մէջ հեթանոս վհուկ մը մահա-  
ռիթ թոյն լեցուց նոմենսըն անուն միսիոնարի  
մը կերակուրին մէջ: Վերջինս անտեղեակ ըլլա-  
լով վտանգէն՝ կերաւ կերակուրը. բայց՝ չմնաս-  
ուեցաւ: Վհուկը սարսափեցաւ այս աստուածա-  
յին յայտնի պաշտպանութենէն, խոստովանե-  
ցաւ իր ոճրագործութիւնը եւ սկսաւ իր հոգւոյն  
փրկութիւնը փնտռել:

Փէթըն ուրիշ պատմութիւններու հետ կը յի-  
շէ նաեւ թէ ինքը անգամ մը թանայի մէջ շըր-  
ջապատուած էր կատաղի վայրենիներով, որոնք  
կրակի տուին իր հրճիթը: Բայց յանկարծ փո-  
թորիկ մը ելաւ ու մարեց կրակը: Ատոր վրայ  
վայրենիները ազդակեցին, «Ասիկա Եհովայի  
անձրեւն է, իրաւ որ Աստուած կը կոռի անոնց  
համար եւ անոնց հետ է, փախչինք»:

Քրիստոնեայ Նիանսացի մը հեթանոս հիւան-  
դի մը վրայ աղօթեց, «Ով Աստուած, ես գիտեմ  
որ Դուն ես ճշմարիտ Աստուածը, սակայն այս  
մարդիկը չեն գիտեր, ուստի յայտնէ հոս Ինքզին-  
քդ իբրեւ ճշմարիտ Աստուած, յայտնէ քու-  
մին թէ Դուն իրմէն եւ իր չաստուածէն աւելի  
ես, ես գիտեմ թէ Դուն կրնաս հիւանդը բժշկել,  
փառքիդ համար բժշկէ զայն»: Այս աղօթքով  
հեթանոսը բժշկուեցաւ եւ այնքան զօրաւոր ե-  
ղաւ ատոր ազդեցութիւնը որ առիթ տուաւ դառ-  
նալու քրիստոնէական հաւատքին:

Կարելի էր յիշել նաեւ դէպքեր, որոնք կը  
ցուցնեն թէ ինչպէս աղօթքով դիւահարներ ալ  
կը բժշկուին միսիոնարութեան դաշտին մէջ:  
Բայց «Բանբեր»ի սիւնակները չեն թուլատրեր:

Այսպէս Աստուած այս ժամանակիս մէջ ալ  
իր ամենակարողութիւնն ու ողորմութիւնը կը  
ցուցնէ ակնյայտի նշաններով ու հրաշքներով,  
երբ յարմար ծառաներ կը գտնէ եւ երբ այդ մի-  
ջոցը անհրաժեշտ է հոգիներ շահելու համար:  
Պօղոսի եւ առաքեալներու ատեն այդ պէտքը ա-  
ւելի մեծ էր, ուստի շատ աւելի էին հրաշքի  
դէպքերը: Հարկ էր հեթանոսութեան ուժը կոտ-  
րել եւ ճամբայ բանալ քրիստոնէութեան հա-  
մար, ուստի Աստուած կը գործէր մեծ ու ակնա-  
բախ զօրութեամբ, մանաւանդ որ Ան գտած էր  
Պօղոսի նման անձեր, որոնք բոլորովին մեռած  
էին իրենց անձին ու կ'երթային հաւատքի ու  
հնազանդութեան ճամբայէն:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

## Ս. ԳԻՐԲԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Ս. Գիրքը կը յայտարարէ թէ մեր ժամանա-  
կի վախճանին Հոովմէական կայսրութիւնը պի-  
տի վերազարթնու (Դան Բ. եւ Դ.):

Թերթերը այնքան յաճախ կը գրեն այս  
կէտին մէջ՝ Մուսուլիսիի դիտաւորութիւնները,  
որ աւելորդ է մեր կողմէն ուրիշ բացատրութիւն-  
ներ տալ:

Ս. Գիրքը կը յայտարարէ թէ պապը կարճ  
ժամանակուան մը համար գործօն դեր պիտի ու-  
նենայ մեր ժամանակին վախճանը դրօշմող դէպ-  
քերուն մէջ: Անիկա ուրիշ մեղաւոր ծրագիրներ  
ունեցողներու հետ համամիտ պիտի գործէ դեռ  
իրեն վերջին եւ ահարկու պատիժը չընդունած  
(Յայտ. ԺԷ. եւ ԺԸ.): Այս մասին Տէր Յիսուս  
լուրջ ազդարարութիւն մը կ'ուղղէ իր սուրբերուն,  
«Ելէք ատոր մէջէն, Իմ ժողովուրդս, որպէսզի ա-  
տոր մեղքերուն հաղորդ չըլլաք, ու ատոր հար-  
ուածներէն բաժին չառնէք» (Յայտ. ԺԸ. 14): Պա-  
պը հիմա իբր վեհապետ ճանչցուած է: Արդէն իր  
բնակութեան տեղին (առաջին անգամը ըլլալով)  
տրուած է «Վատիկանի քաղաք» անունը, ինք-  
նին նաեւ մարգարէութեան մէկ կատարումն է:  
Վատիկան քաղաքը այժմ իր 500 բնակչութեամբ  
տէրութեան մը ճշգրիտ մանրանկարն է: Անիկա  
ունի պզտիկ մնայուն բանակ մը, զինուորներ,  
ոստիկանատուն մը, դատարան մը, բանտ մը,  
երկաթուղիի կայարան մը, հեռաձայնի կատա-  
րելագործուած սիսթեմ մը, նամակատուն մը,  
անթել հեռագրի կայան մը, իր սեփական նա-  
մակազրոյշները եւ իրեն յատուկ դրամը:

Թերթերը կը հաստատեն թէ մեծ պատե-  
րազմէն ի վեր Հոովմի եկեղեցւոյն քաղաքակա-  
նութիւնը ամբողջ աշխարհի մէջ հսկայական  
քայլերով կը յառաջդիմէ: Անոր գերիշխանու-  
թիւնը հիմա Եւրոպայի ամբողջ հարաւային ա-  
րեւելեան մասին մէջ ամենագորաւորներէն մին  
է: Շատ մը երկիրներու մէջ Պապի պատուիրակ-  
ներ հաստատուած են, որոնց պաշտօնն է հոնտեղ  
Հոովմէական եկեղեցւոյ ազդեցութիւնը ի գործ  
դնել:

Ս. Գիրքը կ'ըսէ թէ մեր ժամանակի վախ-  
ճանին աշխարհ ատեն մը «Գերագոյն-մարդ»ու  
մը իշխանութեան ներքեւ պիտի ըլլայ: Մարդիկ  
բարձրակոչ ազդակներով զայն «Կարող եւ զօ-  
րաւոր գործի մարդը» կը կոչեն: Ս. Գիրքը կը  
յայտարարէ Համաշխարհային երկու մեծ իշխա-  
նութիւններու երեւումը, մին քաղաքական միւսը,  
կրօնական. երկուքն ալ այս աշխարհի փառքե-

րովը պիտի փայլին: Բայց Ս. Հոգին զանոնք «Գազանը» եւ «Մեծ պոռնիկը» կը կոչէ: Ահաւասիկ վերջին ժամանակներու քաղաքական և կրօնական դասակարգութեան վերաբերմամբ Աստուծոյ ծրագիրը (Յայտ. ԺԳ. եւ ԺԷ.):

Թերթերը գրեթէ ամէն օր կը գրեն մօտաւոր յայտնութեանը մասին լիազօր պետի մը, որ համաշխարհային կառավարութեան ղեկը իր ձեռքը պիտի առնէ: Ազգային եւ միջազգային մեր կեանքի ամէն ճիւղերուն մէջ ընկերակցութիւններ և համաձայնագրեր կը կազմուին: Մարդիկ շատ քիչ կը հասկնան թէ այսպէսով իրենք կը պատրաստեն գալուստը այն Հարաշուք բռնապետին՝ որուն նմանը աշխարհ երբեք ճանշըցած ըլլայ: Պէրդուան Ռըսըլ «Տէլի էքսպրէս» թերթին մէջ կը գրէ, «Մեզի պէտք է կեդրոնական հեղինակութիւն մը որ կարող ըլլայ առաջնորդել և կառավարել ամբողջ աշխարհը, առանց ասոր աշխարհ կործանման առջեւ կը գտնուի»: Անթել հեռագրի կատարելագործումով մենք կը պատրաստուինք այս բռնապետին հրամաններուն այս երկրաշնչին ծայրէ ծայր փոխադրութիւնը դիւրացնել: Լօնտոնէն Նիւ Եօրք ձայնի մը լսուիլը միայն քանի մը երկվայրկեաններու կը կարօտի: Մարգօնի իր զբօսանաւին վրայէն կոնճակի մը կոխելով կըրցաւ՝ առանց ելեքտրական թելերու հաղորդակցութեան՝ Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ հսկայ սրահի մը 3000 ելեքտրական լամպերը վառել: Այս փորձին վրայ հիմնուելով կրնանք նախատեսել թէ յառաջիկային կարելի պիտի ըլլայ ելեքտրական ուժը տիեզերքի մէջ ծայրէն միւսը փոխադրել առանց թելերու: Այս ղէպքը բովանդակ Իտալիոյ մէջ մեծ խանգաւառութեամբ յայտարարուեցաւ անթել հեռագրի բարձրախօս գործիքով մը: Անթել հեռագրի յառաջիմութիւնները խօսքի կատարեալ փոխադրութիւնը կարելի պիտի ընեն առանց տեղական ամենագօրաւոր գործիքներու կողմէ խանգարուելու կամ արգիլուելու: Ասիկա պարզապէս հրաշալի է. վասնզի մեր ծերուկ Եւրոպայի մէջ կարող պիտի ըլլանք լսել ինչ որ կը խօսուի Քանաուայի մէջ՝ իբր թէ խօսողը մեր քովի սենեակէն խօսէր մեզի: Գերմանական տուն մը հըսկայ բարձրախօս գործիք մը հնարած է (որուն փոխադրութիւնը դիւրին է օգտնաւոր) որ կարող պիտի ըլլայ ամէն տեղ վերջին լուրերը հոչակել: Որքան դիւրին պիտի ըլլայ ուրեմն մարդոց փնտռած բռնակալին, սատանայի այս գործակալին՝ իր հրամանները ամբողջ աշխարհի փոխանցել: Ոչ ոք անոր ձեռքէն խոյս պիտի կրնայ տալ:

Ս. Գիրքը կ'ըսէ թէ մարդիկ փոխանակ բարելաւուելու, աւելի զէշ պիտի ըլլան, եւ անխրատութիւնը պիտի շատնայ: Քանի Քրիստոսի գալուստը մօտենայ, «Չար ու խաբեբայ մարդիկ չարութեան մէջ պիտի յառաջանան մոլորեցնելով ու մոլորելով» Բ. Տիմ. Գ. 13: Առաքեալը մեզի վերջին ժամանակներու իրերու վիճակին վերայով ճշգրիտ նկարագրութիւն մը կուտայ Բ. Տիմ. Գ. 1-5ի մէջ, եւ այս պատկերը շատ կը նմանի մեր ժամանակներուն: (Մատ. ԻԵ. 6): Մեր շուրջն ալ չենք հանդիպիր անոնց որոնք «Ամէն իշխանութիւն կ'անարգեն» (Բ. Պետ. Բ. 10):

Թերթերու վկայութիւնները այս մարգարէութիւնները կը հաստատեն, քանզի մեր օրերու յատկանիշն ալ իրաւամբ ամէն իշխանութեան եւ օրէնքներու դէմ ապստամբութիւն է: Սինեմաներու ճարտարարուեստը բովանդակ աշխարհի առեւտուրին մէջ երկրորդ կարեւոր տեղը կը բռնէ, եւ մենք գիտենք թէ այս զբօսանքը ներկայիս աշխարհը աւերող ոճրագործութեանց ճիւղային ալիքին ամենամեծ պատասխանատուներէն մին է: Անաստուածներու վերջին համաժողովը զոր Մոսկուայի մէջ զումարուեցաւ՝ 36 զանազան երկիրներէ համարժեք կազմակերպութիւններու ներկայացուցիչները միացուցած էր: Անգլիա, Գերմանիա, Աւստրիա և ուրիշ ազգեր իրենց պատուիրակները դրկած էին: Անոնց ամենուն հրահանգ տրուեցաւ իրենց հայրենիքներուն մէջ նոյնը ընել, ինչ որ պօլշեիկները Ռուսիոյ մէջ ըրին: «Առանց մարգարէութեան՝ ժողովուրդը սանձարձակ կ'ըլլայ» Առակաց Իթ. 18 (Փրանս. թարգմ.):

Ս. Գիրքը կը յայտարարէ թէ վերջին օրերը ընդհանուր տխուր հաւատուրացութիւն մը պիտի տիրէ: Տէր Յիսուս Ինքը կ'ըսէ թէ «Եկեղեցւոյ յափշտակութենէն յետոյ քրիստոնէական կրօնքը մեռած մարմինի մը պիտի նմանի»: (Մատ. ԻԳ. 28, տես նաեւ Բ. Թեա. Բ. 3):

Թերթերը շարունակ կը հրատարակեն անուանի քարոզիչներու այն քարոզները որոնք կը ջանան քրիստոնէական հաւատքին հիմերը քանդել: Նիւ Եօրք քաղաքի Մեթոտական պատուելիներէն շատերը կը պարծնան թէ Սուրբ Գրոց Աստուածային ներշնչութիւն չեն հաւատար: Արդեօք Մատանայական կապ մը չկա՞յ այս տեսակ հաւատամքի՞ և այն քաղաքին մէջ օրէ օր սարսափելի չափով աւելցող ոճրագործութեանց միջեւ: Այս տեսակ հաւատքի թուլութեան մենք ամէն կողմ կը հանդիպինք: Ներկայիս քրիստոնէայ կոչուած բնակէն կը հարուածուի «Անգամ

մը սուրբերուն աւանդուած հաւատքին (Յուդ. 3) հիմն իսկ: Արդիական դիւային վարդապետութիւնները մեր համալսարաններէն ու աստուածաբանական դպրոցներէն շատերուն սրտին մէջ հաստատուած են: Աստուծոյ Սուրբ խօսքին ազդեցութիւնը կործանելու այս միտումը ամենէն փաստակար սխալներու տարածման կը նպաստէ: Ոգեհարցութիւն, Ռեւոլյուկանութիւն (Սբ. Գիրք Ուսանողաց Միութիւն), Քրիսչըն Սայընս, Արդիականութիւն, Քրիստոսի-մարմիններ, Ընկեր-վարութիւն, Համայնավարութիւն եւն: Բոլոր այս վարդապետութիւնները միահամուռ այս կամ այն կերպով կը մերժեն Յիսուս Քրիստոսի քաւչարար ողջակիզումը, ասոնք ուրիշ բան չեն, եթէ ոչ Նեոի ոգին (Ա. Յովհ. Դ. 2, 3: Բ. Պետ: Բ. 1): Շատեր այս կործանարար վարդապետութեանց պիտի հետեւին կ'ըսէր Պետրոս առաքեալ մօտ 2000 տարիներ առաջ եւ իր մարգարէութիւնը հիմա կը կատարուի: Ոգեհարցութիւնը միայն ինքնին կը պարծենայ թէ ամբողջ աշխարհի մէջ 60 միլիոն հետեւորդներ ունի եւ 200 թերթեր որոնք միմիայն այս սատանայական սիւթեմը տարածելու նուիրուած են:

Կան դեռ շատ մը ուրիշ «նշան»ներ գործնք Աստուծոյ խօսքը կը յայտարարէ եւ թերթերը կը հաստատեն, բայց մեր էջերը բաւական չեն գրելու: Կրնանք ըսել թէ այս նշաններէն իւրաքանչիւրը կէս գիշերուայ կ'ոչ մըն է Փետային գալուստը ազգարարող:

«Ի՛նչ խաբուսիկ հեռանկարներ», պիտի ըսէ թերեւս մէկը: Այսպէս ըսող մէկը կը փաստէ (իր այսպէս ըսելովն իսկ) թէ ինքը Աստուծոյ ծառայ մը չէ: Քանզի Աստուծոյ ծառայի մը համար բոլոր այս գէպքերը զրաւներ, փաստեր են թէ անգուր Սատանայի տիրապետութեան վախճանը մօտալուտ է. թէ ան պիտի տապալի եւ անոր զօրութիւնը պիտի ոչնչացուի: Այն ատեն զահը եւ կառավարութիւնը թագաւորաց թագաւորին եւ տէրերու Տէր եղողին պիտի տրուին:

«Եւրոպա հաստատուն յենակէտ մը կը փրնտոնէ: Նա ամէն ատենէ աւելի հառաչանքով կը փնտոնէ անսպասան վէճ մը՝ որ կարող ըլլայ զինք ազատել անորոշութեան շարժուն աւազներէն եւ պատերազմի սպառնալիքներէն որոնց մէջ նա հոգեվարքով կը տապալակի», այս է Տէյլի Էքսփրէսի թղթակցի մը կարծիքը (17 Սեպ. 1930): Բայց մենք ուրիշ հաստատուն յենակէտ չենք փնտոներ, հապա կ'սպասենք: Անոր որ Անյաղթելին է, խաղաղութեան իշխանը, Ան՝ որուն գալուստը նոյնքան որոշ է որքան արշալոյսին գալը: «Պա-

տերազմը կը վերնայ միայն այն ատեն երբ մեղքը վերնայ», կ'ըսէ մեծ քրիստոնեայ մը: Քրիստոսէ զատ ո՞վ կրնայ մեղքը վերցնել, եւ արդարութեան իշխանութիւն մը հաստատել. Քրիստոս՝ որ կատարեալ Մարդն է եւ թագաւորաց թագաւորը: Ճրանասցի վիճակագիր մը կ'ըսէ թէ Ն. Ք. 1500էն մինչեւ Յ. Տ. 1860 թուականը (3360 տարիներու շրջանի մը մէջ) մարդիկ 8000 հատ խաղաղութեան դաշնագիրներ շինած են, որոնցմէ իւրաքանչիւրը միջին հաշուով երկու տարի տեւած է: Մարդկային ամէն ջանքեր ձախողած են ձեռք բերել այն՝ ինչ որ Տէր Յիսուս փառքով պիտի հաստատէ: Պատոնի, Մօրի, Պէյքընի, Ուէլզի կողմէ զրուստուած ոսկեղարը ոչինչ կ'արժէ գալիք Հազարամեային բաղդատմամբ: Քաղաքագետները այսօր կը ջանան լուծել այնպիսի հարցեր զորոնք մարդս լուծելու բացարձակապէս անկարող է: Ասիկա ազգերուն տապնապն է, (Ղուկ. ԻԱ. 25) ի՛նչ ընելիքնին չեն գիտեր. իրենց յուսահատական վիճակէն դուրս ելլելու որեւէ միջոց չունին:

#### ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

#### ՆՈՐ ԿՕՇԻԿՆԵՐ

Արդեօք իրա՞ւ այս կարասին մէջ գոյգ մը նոր կօշիկ կայ, հարցուց թովմաս ինքն իրեն, թխադոյն կարասի մը վրայ նայելով: Այնքան հետաքրքիր էր գիտնալու որ բացաւ կարասին բերանը ու ներս նայեցաւ, սակայն բան մը չէր երեւնար անոր մէջ: «Մութ է, բան մը չեմ տեսներ, պիտի կոտրեմ կարասը եւ մէջը նայիմ»:

2է՞ որ կօշիկի շատ պէտք ունէր: Մանաւանդ որ իր Կիրակնօրեայ դպրոցի դասընկերները միասին պտոյտի պիտի երթային եւ ինք հազնելու կօշիկ չունէր: Անոր մայրիկը խոստացած էր անոր հագուստները լուալ եւ կարկտել, սակայն կօշիկները այնքան հին էին որ ալ կարելի չէր զանոնք նորոգել:

Փոքրիկ թովմաս պտոյտի երթալու փափաքէն մղուած՝ կը խորհէր կոտրել այն մութ կարասը, բայց հօրմէն կը վախնար: Հապա եթէ հայրը զինք ծեծէ՞ր:

Փորձութիւնը մեծ էր:

Վերջապէս պտոյտի երթալու բաղձանքը յաղթեց: Թովմաս կոտոր, կոտոր ըրաւ կարասը եւ սկսաւ կտորուանքներուն մէջ գոյգ մը կօշիկ եւ ուրիշ զանազան փնտոնել: Դողդոջուն մատներով

կտորուանքները մէկդի ըրաւ, սակայն ի՞նչ յուսախաբութիւն, կօշիկի տեղ անախորժ հեղուկի մը հոտը կուգար իր քթին:

Թոժմաս սկսաւ դառնապէս լալ: Այնպէս մը հեկեկալէն կուլար որ չլսեց իր հօրը մօտենալը մինչեւ որ անիկա, «Ի՞նչ կայ, ինչո՞ւ կուլաս», հարցուց:

Փոքրիկը սարսափած ոտքի ելաւ: Իր հայրը սովոր էր երկար ժամանակ քնանալու եւ շատ քիչ անգամ աղքատ կանուխ կ'ելլէր:

«Ո՛վ կտորեց կարասս», հարցուց հայրը:

«Ես կտորեցի», պատասխանեց թոժմաս շքնապառ եւ հեկեկալէն:

«Ինչո՞ւ կտորեցիր», հարցուց հայրը կրկին:

Թոժմաս վեր նայեցաւ: Իր ակնկալածին չափ ահարկու չէր հնչեր հօրը ձայնը: Անիկա ազդուած էր փոքրիկ տղուն դառնաղէտ արտասուքներէն ու հեկկալուքէն:

«Կտորեցի որ անոր մէջ գոյգ մը կօշիկ գտնեմ: Ես ալ կ'ուզեմ ընկերներուս հետ պտոյտի երթալ, բայց անոնք բոլորն ալ կօշիկ ունին, միայն ես չունիմ»:

Կարասին մէջ կօշիկ կ'ըլլայ:

«Մայրիկը այդպէս ըսաւ: Անկէ գոյգ մը նոր կօշիկ խնդրեցի, անիկա ըսաւ թէ կօշիկները այդ կարասին մէջ են, ու հոն ոչ թէ միայն կօշիկներ կային, այլ նաև վերարկուներ, գլխարկներ, հաց, միս եւ շատ ուրիշ բաներ: Եւ քանի որ մայրիկը միշտ ճշմարիտը կը խօսի, ես վստահ էի թէ այս կարասին մէջ գոյգ մը կօշիկ պիտի գտնէի»: Թոժմաս հազիւ կրցաւ այսչափ ըսել ու դարձեալ սկսաւ դառնապէս լալ: Մայրիկին խօսքը սաստկացուցած էր անոր յուսախաբութիւնը:

Հայրը երկար ժամանակ լուռ կեցաւ: Թոժմաս վերջապէս իր փոքրիկ գլուխը բարձրացունելով ըսաւ, «Շատ կը ցաւիմ որ քու կարասի կտորեցի, հայրիկ, անգամ մըն ալ այդպէս բան պիտի չընեմ»:

Հայրիկը իր ձեռքը թոժմասի գլխուն վրայ դնելէ վերջ հեռացաւ: Թոժմաս դարձացած վեր նայեցաւ: Ինչպէ՞՞ կ'ըլլար որ հայրիկը բնաւ բարկացած չէր իրեն:

Երկու օր վերջը, ճիշդ պտոյտէն առաջ հայրը փոքրիկին ձեռքը ծրար մը դնելով ըսաւ որ գայն բանար:

«Նոր կօշիկներ, նոր կօշիկներ», աղաղակեց թոժմաս: «Հայրիկ, ասոնք ուսկի՞ց են, նոր կարասի մը առիւր եւ անոր մէջ էին»:

«Ո՛չ, տղաս, ալ նորէն կարաս պիտի չառնեմ: Մայրիկիդ ըսածը ճշմարիտ էր. ամէն բան կա-

րասին մէջ կ'երթար, սակայն քանի որ բաները կարասին մէջէն դուրս հանել դժուար է, այլեւս հոն չպիտի պահեմ», պատասխանեց երջանիկ հայրիկը:

Մանուկները կրնա՞ն ըսել թէ իրենք ի՞նչ կրնան սորվիլ թոժմասի պատմութենէն:

Թարգ. ԱՆԳԼԻԱՐԷՆԷ

Չորս տարեկանի մօտ տղեկ մը, մինչ օր մը կը խաղար գետնափոր շտեմարանին մօտ, որուն անցքին դուռը բաց մնացած էր, արկածով մէջը ինկաւ, բայց շնորհիւ հոն գտնուած կողով մը փայտի տաշեղներուն վրայ իյնալուն, հաւանական մահէ ազատեցաւ:

Իր ընտանիքը շատ ազդուեցաւ այս նախախնամական պատահարէն եւ օրուան մէջ քանիցս յիշուեցաւ սոյն պարագան:

Գիշերը երբ տղեկը անկողին դրին ու առանձին փնաց, իր աղօթելու մեղմիկ ձայնը լսեցին որ հաւատքով ու սիրով լեցուն իր սրտառու խնդրուածքը կ'ընէր ըսելով, «Ով Աստուած, խնդրեմ, այդ շտեմարանին դուռը զոց պահէ, իսկ եթէ չես կրնար այդ ընել, չե՞ս հաճիր գոնէ հոն պահել միշտ փայտի տաշեղներու կողով մը»:

Փոքրիկ աղջիկ մը որ յուսախաբ եղած էր իր անունը Սուրբ Գիրքին մէջ չգտնուելուն, ըսաւ, «Հոգ չէ, գիտեմ ինչ պիտի ընեմ, անանկ բարի աղջիկ մը պիտի ըլլամ որ, եթէ երբեք ուրիշ Սբ. Գիրք մը գրուի, իմ անունս ալ մէջը գրուի»:

### ՓՇՈՏ ԹՈՒՓԸ

Փոքրիկ տղեկ մը՝ զոր փուշն էր խայթեր, իր ցաւն արցունքով հօրը կը պատմէր.

«Ինչո՞ւ գեղեցիկ արտին մէջ մեր տան Բուսեր է արդեօք այս թուփն անպիտան»:

—Որպէսզի փորձով սորվիս դուն, տղաս, թէ պէտք է չարէն միշտ հեռու կենաս:

